

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հայագիտական կենտրոն 6
2. Տեղեկատվական հետազոտությունների կենտրոն 7
3. Քաղաքական հետազոտությունների կենտրոն 8
4. Հրատարակչական կենտրոն 9
5. Ուսումնական կենտրոն 12
6. Գործունեության ապահովման ծրագիր 17

Հավելված 1

Հայագիտական կենտրոնի հրատարակումները 19

Հավելված 2

ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմների ուսումնասիրություն 24

Հավելված 3

Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի հրատարակումները 31

Հավելված 4

Քաղաքական հետազոտությունների կենտրոնի հրատարակումները 35

Հավելված 5

Հրատարակությունների բաշխման ցուցակ 39

Հավելված 6

Նամակ վարչապետին (28.02.2011թ. թիվ 12) 55

Հավելված 7

Նամակ վարչապետին (27.09.2011թ. թիվ 65) 56

Հավելված 8

Համահայկական համալսարանի ստեղծման ծրագրային դրույթներ 57

Հավելված 9

Ամաղուի տարածքի հետ կապված հնարավոր
նախագծերը և խնդիրները 63

Հավելված 10

2010թ. ֆինանսական հաշվետվությունները և
անկախ աուդիտորական եզրակացությունը 66

Հավելված 11

«Նորավանք» ԳԿՀ 2011թ. ՀՀ պետական բյուջեից ստացված ֆինանսական միջոցների և
կատարված ծախսերի վերաբերյալ 88

Հավելված 12

«Նորավանք» ԳԿՀ 2011թ. ոչ բյուջեից ստացված
ֆինանսական միջոցների և կատարված ծախսերի վերաբերյալ 94

Հավելված 13

Հաշվետվություն հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի
և բյուջետային պարտքերի մասին

Հավելված 14

Այլ քաղաքականության միջոցառումների գծով
կատարողական չափորոշիչներ

Ներածություն

Հիմնադրամն ունի 5 կենտրոն՝ Հայագիտական, Քաղաքական, Տեղեկատվական հետազոտությունների, Ուսումնական (որի պատասխանատվության ոլորտում է նաև Ամադուի տարածքը), Հրատարակչական, և Գործունեության սպասարկման ծրագիր, որոնցից յուրաքանչյուրի ֆինանսավորումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարությունն ներկայացրած հայտերի: Հիմնադրամում աշխատում է 38 աշխատակից, որոնցից 17-ը՝ փորձագետ, 9-ը՝ հրատարակչական կենտրոնի աշխատակից (խմբագիրներ, սրբագրիչներ, թարգմանիչներ, կայքը սպասարկողներ և գրադարանավար), 12-ը՝ սպասարկող անձնակազմի աշխատակից (որոնց թվում 8 տեխնիկական աշխատող՝ պահակներ և հավաքարարներ):

Հիմնադրամի 10 աշխատակից ունի գիտական աստիճան:

Հիմնադրամի գործունեության տարեկան ծրագրերը և նախագծերը քննարկվում և հաստատվում են Հոգաբարձուների խորհրդում, ընթացիկ ծրագրերը՝ Հիմնադրամի Գիտական-փորձագիտական խորհրդում:

Ամսագրերի հրատարակումների վերաբերյալ որոշումներն (տարեկան 6 համար «21-րդ ԴԱԸ», 4 համար «21-й Век», 2 համար «21st Century», 6 համար «Գլոբուս Ազգային անվտանգություն» և 6 համար «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», ընդամենը՝ 24 համար) ընդունում են այդ հրատարակությունների խմբագրական խորհուրդները:

2011 թվականին «Նորավանք» ԳԿՀ-ն հրատարակել է 24 ամսագիր և 6 գիրք, որոնցից 5-ը հեղինակել են Հիմնադրամի փորձագետները: Հիմնադրամի փորձագետները հեղինակել և հրատարակել են 124 հոդված հիմնադրամի և միջազգային հանդեսներում, հանդես են եկել 43 զեկույցներով հայաստանյան սեմինարներում, գիտաժողովներում և 7 միջազգային գիտաժողովներում: Հիմնադրամի «21-Век» ամսագիրը 2011-ին «հղումների ինդեքսով» (Impact factor) մտել է հայաստանյան առաջին 3 գիտական հանդեսների շարքը՝ հանդիսանալով ՀՀ-ում առաջատարը հումանիտար ոլորտում: Հիմնադրամի կայքում 2011թ. տեղադրվել է շուրջ 900 նյութ, այն ունի մոտ 1500 բաժանորդ, ամսական նվազագույնը 11 000 հյուր, որոնք ընթերցում են ավելի քան 25 000 նյութ:

Հիմնադրամի փորձագետները հրապարակումներով հանդես են եկել թերթերում, ամսագրերում, հարցազրույցներ են տվել ՀՀ և արտասահմանյան հեռուստաալիքներին, որոնց թվում՝ Հ1, ԱրմՆյուս, Կենտրոն, Հ2, Russia Today, МИР, ԱԸ և այլն:

Հիմնադրամը Սփյուռքի նախարարության և «Հիքսոս» հիմնադրամի (Շվեյցարիա) հետ համատեղ կազմակերպել է 1 միջազգային կոնֆերանս՝ նվիրված հայության կրոնադավանական հիմնախնդիրներին, որին մասնակցել և զեկույցներով հանդես են եկել հետազոտողներ ՀՀ-ից, Լիբանանից, Գերմանիայից և Սիրիայից: 2011-ի ամռանը կազմակերպված «Ազգային անվտանգության հիմնահարցեր» խորագրով ամառային դպրոցին մասնակցել են մոտ 50 ուսանող, մասնագետներ ՀՀ պետական կառույցներից, այդ թվում՝ ԱԱԽ-ից և ՊՆ-ից:

Հիմնադրամը համագործակցում է ՀՀ Սփյուռքի նախարարության, Գիտության պետական կոմիտեի, «ՀայՌուսագաղթ» ՓԲԸ-ի, «Հիքսոս» հիմնադրամի (Շվեյցարիա), Վտարանդի ժողովուրդների Եվրոպայի խորհրդի (Իտալիա) և Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի (ՌԴ) հետ, որոնց հետ 2011-ին իրականացրել է 5 շարունակական բնույթի հետազոտական և հրատարակչական ծրագրեր:

2011-ին խորհրդատվություն ստանալու և քննարկումների նպատակով հիմնադրամ են այցելել դիվանագետներ ՌԴ, ԱՄՆ, Վրաստանի, Լեհաստանի, Իրանի, Ուկրաինայի, Կանադայի դեսպանատներից, ինչպես նաև բազմաթիվ միջազգային կազմակերպություններից:

**ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Հայագիտական կենտրոն

Հայագիտական կենտրոնում աշխատում են 6 փորձագետ՝ Արեստակես Միմավորյան (կենտրոնի ղեկավար), փորձագետներ՝ Վահրամ Հովյան, Թամարա Վարդանյան, Տիգրան Ղանալանյան, Ռուբեն Մելքոնյան, Էդուարդ Դանիելյան:

Կենտրոնն իրագործում է աշխատանքներ «Հայության հատվածների հիմնախնդիրները և մտավոր ռեսուրսները» ընդհանուր նախագծի շրջանակներում:

2011թ. ընթացքում ուսումնասիրվել են Թուրքիայի հայության կրոնադավանական, հոգևոր-եկեղեցական և կրթական հիմնախնդիրները: Հետազոտություններում վեր են հանվել խոցելի խմբերի՝ բռնի իսլամացված հայերի և Անկարայի հայ կաթոլիկների էթնիկ ընկալման հարցերը: Միաժամանակ ուսումնասիրվել են Բուլղարիայի, Լեհաստանի, Եգիպտոսի, Վրաստանի, Հարավային Ամերիկայի և Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքները, թիֆլիսահայ համայնքում տեղի ունեցող նոր զարգացումները: Անդրադարձ է կատարվել թյուրքախոս երկրների հետ հարաբերություններին, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությանը, թուրքական վերլուծական կենտրոնների առանձնահատկություններին և հայության քաղաքակրթական արժեհամակարգին:

«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնը Սփյուռքի նախարարության և «Հիքսոս» հիմնադրամի հետ համատեղ ղեկտեմբերի 9-10-ը կազմակերպել է «Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանս: Կոնֆերանսին մասնակցել են ոլորտի մասնագետներ Հայաստանից և Սփյուռքից:

2011թ. ՀՀ Սփյուռքի նախարարությունից ստացված դրամաշնորհներով իրականացվել է երեք հիմնարար հետազոտություն:

Ընդհանուր առմամբ, 2011թ. կենտրոնի աշխատակիցները հեղինակել են 45 հոդված, խմբագրել 1 գիրք, ղեկավարել 2 գրքի հեղինակային խմբի աշխատանքները, նախաձեռնել 1 գիտաժողով, ելույթներով մասնակցել 22 սեմինարի և գիտաժողովի, տվել մի շարք հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ:

Կենտրոնի աշխատակիցների հեղինակած նյութերի մասին տեղեկատվությունը տես *Հավելված 1*-ում:

2012թ. կենտրոնը նախատեսում է կատարել աշխատանքներ «Հայության հատվածների հիմնախնդիրները և մտավոր ռեսուրսները» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է ուսումնասիրել Սփյուռքի հոգևոր անվտանգության հիմնախնդիրները, մշակել ՀՀ և Սփյուռքի գիտական և փորձագիտական հանրույթների համագործակցության մեխանիզմներ:

2. Տեղեկատվական հետազոտությունների կենտրոն

Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնում աշխատում են 7 փորձագետ՝ Գագիկ Հարությունյան (կենտրոնի ղեկավար), Աննա Ժամակոչյան, Արփինե Մանուսյան, Լիլիթ Հակոբյան, Մամվել Մարտիրոսյան, Սոնա Մանուսյան, Սուրեն Մարտիկյան:

Կենտրոնն իրագործում է աշխատանքներ «ՀՀ տեղեկատվական դաշտի բովանդակային վերլուծություն» նախագծի շրջանակում, որում մասնավորապես հաշվի է առնվում Ադրբեջանի տեղեկատվական գործողությունների գործոնը:

2011թ. կենտրոնը կատարել է աշխատանքներ «Ադրբեջանական հակահայկական ինֆոքաղաքականություն», «Հայության և հայ համայնքների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն», «Մեր հաղթանակները» (4-րդ հատոր), «Հայաստանի տեղեկատվական ներքին ռեսուրսների ուսումնասիրություն և վարկանիշավորում» ծրագրային ուղղություններով: Վերջին ծրագիրը (*Հավելված 2*) մասնավորապես իրականացվում է ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից մրցութային կարգով տրամադրված երկամյա դրամաշնորհի միջոցներով: Այն նպատակ ունի ուսումնասիրել ՀՀ տեղեկատվական տարածքում շրջանավոր հիմնական իդեոլոգեմները՝ Հայաստանի ավանդական և ցանցային մեդիաների բովանդակության վերլուծության ու կարծիք ձևավորողների արժեքային կողմնորոշումների հետազոտման միջոցով:

ՏՀ կենտրոնը «Արմատ» մամուլի ակումբի հետ համատեղ կազմակերպել է 2 գիտաժողով՝ «Ադրբեջանական հակահայ քարոզչությունը և հակազդման ուղղությունները» և «Հայկական տեղեկատվական ռեսուրսների համագործակցության խնդիրները տեղեկատվական անվտանգության համատեքստում» թեմաներով:

Ընդհանուր առմամբ 2011թ. կենտրոնի աշխատակիցները հեղինակել են 31 հոդված, 1 մենագրություն, ղեկավարել 2 գրքի հեղինակային խմբի աշխատանքները, նախաձեռնել 2 գիտաժողով, ելույթներով մասնակցել 15 գիտաժողովի, տվել են մի շարք հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ:

Կենտրոնի աշխատակիցների հեղինակած նյութերի մասին տեղեկատվությունը տես *Հավելված 3*-ում:

3. Քաղաքական հետազոտությունների կենտրոն

Քաղաքական հետազոտությունների կենտրոնում աշխատում են 5 փորձագետ՝ Սևակ Սարուխանյան (կենտրոնի ղեկավար), Արա Մարջանյան, Մերգեյ Սարգսյան, Կարեն Վերանյան, Արաքս Փաշայան:

Կենտրոնն իրականացնում է հետազոտություններ «ՀՀ տարածաշրջանային և էներգետիկ անվտանգության խնդիրները» նախագծի շրջանակներում:

Կենտրոնի փորձագետները մասնակցել են միջազգային գիտաժողովների՝ Վիեննայում, Զալցբուրգում, Բիշքեկում և Թբիլիսիում, ինչպես նաև Մոսկվայի Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների ինստիտուտի կազմակերպած *on-line* կլոր սեղանին: Հիմնական միջոցառումները, որոնց մասնակցել են կենտրոնի փորձագետները, նվիրված են եղել էներգետիկ և տարածաշրջանային անվտանգության, ինչպես նաև միջազգային ահաբեկչության հարցերին:

Ստեղծվել է աշխատանքային խումբ արտերկրի փորձագիտական կենտրոններում կատարվող ռազմավարական կանխատեսումների և դրանցում կիրառվող մեթոդների ուսումնասիրման ուղղությամբ:

Ուշադրության կենտրոնում է գտնվում ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրի շրջանակներում ՀՀ-ԵՄ էներգետիկ համագործակցության հարցերի ուսումնասիրման խնդիրը, որը պետք է մատնանշի համագործակցության այն հիմնական ուղղությունները, որոնք կարող են նպաստել ՀՀ էներգետիկ անվտանգության ամրապնդմանը:

Ընդհանուր առմամբ, 2011թ. կենտրոնի աշխատակիցները հեղինակել են 48 հոդված, ելույթներով մասնակցել 6 գիտաժողովի և սեմինարի, տվել մի շարք հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ:

Կենտրոնի աշխատակիցների հեղինակած նյութերի մասին տեղեկատվությունը տես *Հավելված 4*-ում:

2012 թվականին կենտրոնը շարունակելու է ծրագրային հետազոտությունները՝ տարածաշրջանային, միջազգային և էներգետիկ անվտանգության ուղղություններով: Այս ուղղություններով կատարվելիք հետազոտություններում կենտրոնական տեղ է զբաղեցնելու ՀՀ անվտանգության հետ անմիջական կապ ունեցող հարցերի ուսումնասիրությունը:

4. Հրատարակչական կենտրոն

Հրատարակչական կենտրոնում աշխատում են 8 աշխատակից՝ Լուսինե Բաղրամյան (կենտրոնի ղեկավար), Գևորգ Հայրապետյան, Խոնարհիկ Քարաուղլանյան, Լիլիթ Մելիքսեթյան, Ռուզաննա Մանուկյան, Տաթևիկ Քարաուղլանյան, Անահիտ Հարությունյան, Ժանետա Գալստյան:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Հրատարակվել են՝

- «21-րդ ԴԱԸ» ամսագրի 6 համար,
- «21-й БЕК» ամսագրի 4 համար,
- “21st CENTURY” ամսագրի 2 համար,
- «Գլոբուս Ազգային անվտանգություն» ամսագրի 6 համար,
- «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն» ամսագրի 6 համար,
- «Մեր հաղթանակները» քառահատորի 3-րդ հատորը,
- Գազիկ Հարությունյանի «Распад «системы» и формирование будущего» գիրքը,
- Հրաչյա Արզումանյանի «Сложное мышление и сеть: парадигма нелинейности и среда безопасности 21 века» գիրքը,
- «Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները» (Ա.Ժամակոչյան, Ա.Սիմավորյան, Վ.Հովյան, Տ.Ղանալանյան, Դ.Գալստյան, Ա.Պապյան, Ս.Մարտիրոսյան, Է.Բաղայան) գիրքը,
- «Միլոնոքի դավանանքային հատվածների խնդիրները և հնարավորությունները» (Է.Դանիելյան, Գ.Հարությունյան, Ա.Սիմավորյան, Վ.Հովյան, Հ.Հովհաննիսյան, Ռ.Մելքոնյան) գիրքը,
- «Ռուսաստանի Դաշնության հայության կրոնադավանանքային կողմնորոշումները» (Ա.Սիմավորյան, Վ.Հովյան) գիրքը,

որոնք առաքվել են բաշխման ցուցակում ընդգրկված կազմակերպություններին և անհատներին (Հավելված 5), ինչպես նաև բաշխվել են Հիմնադրամի սեմինարների մասնակիցներին:

«Նորավանք» ԳԿՀ-ն 2003 թվականից ընդհանուր առմամբ հրատարակել է **50** անուն գիրք և **192** համար ամսագիր-տեղեկագիր (ընդամենը՝ 242):

Հիմնադրամի հրատարակությունները (որոնց առաջուր մասնակցել է հայրենական և օտարերկրյա 120 հեղինակ) բաշխվում են թիրախային խմբին, որտեղ ընդգրկված են.

1. ՀՀ նախագահի աշխատակազմը,
2. ՀՀ ԱԾ պատգամավորական խմբերը,
3. ՀՀ կառավարությունը,
4. «Նորավանք» ԳԿՀ Հոգաբարձուների խորհրդի անդամները,
5. ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդը,
6. ՀՀ ուժային և այլ նախարարությունները,
7. ՀՀ-ում տեղակայված օտարերկրյա դեսպանատները,
8. ՀՀ գիտական և կրթական հաստատությունները,
9. ԼՂՀ պետական կառույցները,

10. արտերկրում գտնվող որոշ անհատներ և հաստատություններ:

Ընդհանուր առմամբ, Հիմնադրամի հրատարակությունների բաշխման ցուցակում ընդգրկված է մոտ **103** հասցե, որոնց ուղարկվում է մինչև 240 ամսագիր (*Հավելված 5*):

Հիմնադրամի կայքն ունի **1443** մշտական բաժանորդ, որոնք ստանում են առաքվող նյութերը 3 լեզվով (հայերեն՝ 950 բաժանորդ, ռուսերեն՝ 925, անգլերեն՝ 770): 2011թ. ընթացքում կայքում տեղադրվել է 920 նյութ, որոնք առաքվել են բոլոր բաժանորդներին:

Կայքի այցելուների թիվը 2011թ. ընթացքում, ըստ CIRCLE.AM-ի, կազմել է.

	Visits (այցելու)	Pageviews, Hits (Էջերի թերթում)	Hosts (IP հասցե)
Total (Ընդհանուր)	133,746	302,396	116,557

Այցելությունների աշխարհագրությունը

Երկիր	Այցելու	%	Էջերի թերթում	%	Ծավալ
Ռուսաստան	273 128	34,7	1 328 016	21,4	32.8 Գբ
Հայաստան	265 448	33,7	3 043 702	48,9	57.84 Գբ
ԱՄՆ	67 770	8,6	395 135	6,4	6.50 Գբ
Ուկրաինա	22 689	2,9	192 737	3,1	3.95 Գբ
Գերմանիա	18 163	2,3	98 217	1,6	1.63 Գբ
Հոնկոնգ	10 921	1,4	11 520	0,2	316.64 Մբ
Չեխիա	9 912	1,3	81 955	1,3	1.67 Գբ
Ֆրանսիա	9 561	1,2	94 030	1,5	1.34 Գբ

**Միացում կայքին
ըստ NORAVANK.AM կայքի ադմինիստրատորի տվյալների (2011թ.)**

	Այցելու	%	Էջերի թերթում	%
Ընդամենը	428 125	100	548 477	100
Ուղղակի հասցեով/noravank.am	343 309	72,6	396 596	72,3
Այլ հղումներով	44 505	7,5	54 494	9,9
Որոնողական համակարգերի միջոցով, որից՝	84 816	17,9	97 387	17,8
Google	68 036	80,2	78 766	80,9
Yandex	14 454	17	16 023	16,5
Rambler	485	0,6	532	0,5
Այլ	1 841	2,2	2 066	2,1

2012թ. նախատեսվում է հրատարակել՝ «21-րդ ԴԱԸ» - 6 համար, «21-й Век» - 4 համար, "21-st Century" - 2 համար, «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն» - 6 համար, «Գլոբուս Ազգային անվտանգություն» - 6 համար, «Մեր հաղթանակները» քառահատորի 4-րդ հատորը և, համաձայն նախապես հաստատված ծրագրերի, 2 հիմնարար հետազոտություններ՝ գրքերի տեսքով:

5. Ուսումնական կենտրոն

Կենտրոնի ղեկավար՝ Տիգրան Հարությունյան:

2011թ., նախատեսված ուսումնական ծրագրի համաձայն, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աջակցությամբ անցկացվել է «Ազգային անվտանգության հիմնախնդիրները» խորագրով Ամառային դպրոցը:

Ներկայացվել են ազգային անվտանգության արդի հիմնախնդիրները, Հայաստանի ու Հայության ազգային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր: Դպրոցին մասնակացել է 40 ունկդիր, որոնցից 33-ն ակտիվ մասնակացության համար ստացել են վկայականներ (*տես Աղյուսակ 1*):

«Նորավանք» ԳԿՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանին է ներկայացվել Համահայկական համալսարանի ստեղծման նորացված ծրագիրը (կցվում է ՀՀ վարչապետին ուղղված N12 28.02.2011թ. նամակը, *Հավելված 6*):

ՀՀ վարչապետի (հ/հ 02/14.1/10255-11; 21,06,2011թ.) հանձնարարականով աշխատանքներ են տարվել Համահայկական համալսարանի գործունեության ֆինանսավորման համար ոչ պետական ներդրումներ ներգրավելու ուղղությամբ, ինչի մասին ՀՀ վարչապետը տեղեկացվել է (կցվում է ՀՀ վարչապետին ուղղված N65 27.09.2011թ. նամակը, *Հավելված 7*):

2011թ. կազմակերպվել է 16 սեմինար, որոնց մասնակցել են առաջատար փորձագետներ Հայաստանից և Սփյուռքից, ՀՀ-ում օտարերկրյա դիվանագիտական կորպուսների ներկայացուցիչներ (*տես Աղյուսակ 2*):

Հաշվետու ժամանակահատվածում անցկացվել է «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի 5 նիստ:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հետ ձեռք է բերվել համաձայնություն՝ պատրաստել հատուկ դասընթացներ մագիստրատուրայում սովորող նրանց ուսանողների համար:

Մշակվում է նաև «Նորավանք» ԳԿՀ բազայի հիման վրա ամբիոնի ստեղծման նախագիծ, որը կգործի ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կազմում:

**«Նորավանք» գիտակրթական հիմնադրամում 2011թ. առաջին կիսամյակում
անցկացված սեմինարների ցանկ**

N	Թեմաներ	Զեկուցողներ
1.	2010թ. Ռազմաքաղաքական արդյունքները	«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ Սերգեյ Սարգսյան
2.	Սոցիալական ցանցերը հետժողովրդավարության և տեղեկատվական անվտանգության համատեքստում	«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գագիկ Հարությունյան
3.	Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը և հակազդեցության ուղղությունները	«Նորավանք» ԳԿՀ խորհրդական Էդուարդ Դանիելյան, «Նորավանք» ԳԿՀ փորձագետներ Սամվել Մարտիրոսյան, Վարուժան Գեղամյան
4.	Որոնման համակարգերի և տեղեկատվական տվյալների շտեմարանների կիրառումը վերլուծական հետազոտություններում	«Նորավանք» ԳԿՀ խորհրդական Արա Մարջանյան
5.	Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը. ռազմաքաղաքական դիմակայության սցենարներ	«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ Սերգեյ Սարգսյան
6.	«Նորավանք» ԳԿՀ և Սփյուռքի նախարարության համատեղ գրքերի սեմինար-շնորհանդես	Սփյուռքի նախարար Հ.Հակոբյան, «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գ.Հարությունյան, Տեղեկատվական կենտրոնի ղեկավարի տեղակալ Ա.Ժամակոչյան
7.	Իրադրությունն Իրանում և ազդեցությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում	«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն Սևակ Մարուխանյան
8.	Հայկական տեղեկատվական ռեսուրսների համագործակցության խնդիրները տեղեկատվական անվտանգության համատեքստում	«Նորավանք» ԳԿՀ, «Արմատ» ակումբ, ԳԱԱ, ԵՊՀ փորձագետներ
9.	«Նորավանք» ԳԿՀ 2011թ. առաջին կիսամյակի գործունեությունը և 2011թ. ծրագրերի ընթացքը	«Նորավանք» ԳԿՀ կենտրոնների ղեկավարներ Արեստակես Միմավորյան, Տիգրան Հարությունյան, Սևակ Մարուխանյան, Լուսինե Բաղրամյան, «Նորավանք» ԳԿՀ տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փոխղեկավար Աննա Ժամակոչյան
10.	Հայ համայնքի խնդիրները Գերմանիայում	Գերմանիայի Դաշնային

N	Թեմաներ	Զեկուցողներ
		Հանրապետություն, Կլաուս Գալաս
11.	Թուրքական վերլուծական կենտրոնների զարգացման փուլերը	«Նորավանք» ԳԿՀ հայագիտական կենտրոնի ղեկավար Արեստակես Սիմավորյան
12.	Հայաստանի էներգետիկ անվտանգությունը. հիմնախնդիրներ և հեռանկարներ	«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն Սևակ Սարուխանյան
13.	Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքները	«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ Վահրամ Հովյան
14.	Արաբական հեղափոխությունները և կառավարման սցենարները	«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն Գագիկ Հարությունյան
15.	Մերձավոր Արևելքի հայ համայնքները ներկա քաղաքական իրավիճակում	Հակոբ Չոլաքյան, Վարդան Թաշճյան, Միհրան Դաբադ, Համո Մոսկոֆյան, «Նորավանք» ԳԿՀ փորձագետներ, Սփյուռքի նախարարություն

«Ազգային անվտանգության հիմնախնդիրները» խորագրով Ամառային դպրոցի զեկուցողների և զեկուցումների ցանկ

Թիվ	Թեմաներ	Զեկուցողներ
1.	Արդի Հայաստան. նոր պետականություն և նոր հիմնախնդիրներ	Գագիկ Հարությունյան, «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն
2.	Հայաստանի էներգետիկ ապագան և ազգային անվտանգությունը	Արա Մարջանյան, «Նորավանք» ԳԿՀ փորձագետ, ՄԱԿ ԶԾ ազգային փորձագետ
3.	Պատերազմի բնորոշումը 21-րդ դարում	Հրաչյա Արզումանյան, Անվտանգության հարցերով փորձագետ
4.	Ռազմավարական գլոբալ ազդեցություն և հաղորդակցության նոր մոդելը. դասեր Հայաստանի համար	Լիանա Այվազյան, լրագրող
5.	Իրանի քաղաքականությունը Հարավային Կովկասում	Սևակ Սարուխանյան, «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն
6.	Կինոքարոզչություն	Մերգեյ Սարգսյան, «Նորավանք» ԳԿՀ փորձագետ
7.	Թուրքական վերլուծական կառույցների զարգացման փուլերը	Արեստակես Սիմավորյան, «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար
8.	Ադրբեջանի հայալեզու հեռուստահաղորդումները ՀՀ տեղեկատվական անվտանգության համատեքստում	Աննա Ժամակոչյան, «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ
9.	Հայաստանի դեմ Ադրբեջանի ծավալած հոգեբանական-տեղեկատվական պատերազմի ռազմավարությունը և մարտավարական հնարքները	Դավիթ Զամալյան, ՊՆ Հասարակական խորհրդի անդամ, ռազմական փորձագետ
10.	Պանթյուրքիզի գաղափարախոսությունը և ադրբեջանա-արցախյան հակամարտության կարգավորումը	Դավիթ Բաբայան, ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվական գիտավոր վարչության պետ
11.	Քաղաքացիական և քաղաքական քարոզչությունը նոր տեխնոլոգիաների միջոցով	Մամվել Մարտիրոսյան, «Նորավանք» ԳԿՀ փորձագետ

Մշակվել են Համահայկական համալսարանի հայեցակարգը (Հավելված 8) և հիմնադրամին պատկանող Ամադուի տարածքի զարգացման դրույթները (Հավելված 9):

2012թ.-ին պլանավորվում է անցկացնել Ամառային դպրոց:

6. Գործունեության ապահովման ծրագիր

2011թ. կատարվել են «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործունեության ապահովման ծրագրի գծով հետևյալ աշխատանքները.

1. «Նորավանք» ԳԿՀ-ն հայտարարել է աուդիտի մրցույթ, որի հաղթող է ճանաչվել «Աուդիտ Սթար» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր «Նորավանք» ԳԿՀ 2010թ. գործունեության և ֆինանսական հաշվետվության աուդիտի անցկացման վերաբերյալ: «Աուդիտ Սթար» ՍՊԸ-ն 2011թ. փետրվարի 23-ից մինչև մարտի 10-ը իրականացրել է նշված աուդիտը և «Նորավանք» ԳԿՀ 2010թ. գործունեության և ֆինանսական հաշվետվության համար տվել աուդիտորական եզրակացություն, որը ներկայացվում է *Հավելված 10-ում*:

Ըստ տրված աուդիտորական եզրակացության՝ «Նորավանք» ԳԿՀ 2010թ. գործունեությունը և ֆինանսական հաշվետվությունն ամբողջապես համապատասխանում են ՀՀ օրենսդրությանը:

«Նորավանք» ԳԿՀ-ն 2011թ. մարտի 23-ին, համաձայն հաստատված ձևի, հաշվետվություն է ներկայացրել ՀՀ Արդարադատության նախարարության պետական ռեգիստրին՝ կցելով նաև նշված աուդիտորական եզրակացությունը: Աուդիտորական եզրակացությունը հրատարակվել է «Գոլոս Արմենիի» օրաթերթի 17.03.2011թ. N26 (20099) համարում:

2. ՀՀ բյուջեից «Նորավանք» ԳԿՀ-ն 2011թ. ստացել է **95,0** մլն դրամ (*Հավելված 11*), որից կատարված ծախսերի մեծությունների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են սույն հաշվետվությամբ սահմանված ձևերով՝ Հ-2 և ԱՀ-1 (*Հավելված 13, 14*), ընդ որում՝ տարեկան ծախսերն ըստ հոդվածների կազմում են՝

- աշխատավարձ և պարտադիր սոցապահովության վճարներ – **73,142** մլն դրամ,
- մասնագիտական և գիտաուսումնական ծառայությունների գծով ծախսեր – **5,818**

մլն դրամ,

- հրատարակչական ծախսեր – **10,5** մլն դրամ,
- կոմունալ ծառայություններ – **1,08** մլն դրամ,
- տրանսպորտային ծախսեր – **1,5** մլն դրամ,
- կապի ծառայության ծախսեր – **2,55** մլն դրամ,
- շենքի և ավտոմեքենայի գույքահարկի գծով ծախս – **0,41** մլն դրամ:

Ընդամենը՝ **95,0** մլն դրամ:

Մանրամասն ծախսային ուղղությունները ներկայացված են կցված հաշվետվության ձևերում:

ՀՀ Ֆինանսների նախարարության հետ ճշգրտելով՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի կազմվել է «Նորավանք» ԳԿՀ 2011թ. ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների հաշվին գնումների պլանը և ներկայացվել լիազոր մարմին: Ելնելով լիազոր մարմին (ՀՀ Ֆինանսների նախարարություն) ներկայացված 2011թ. գնումների պլանից, «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման պահանջներից՝ «Նորավանք» ԳԿՀ 2011թ. նախատեսված տպագրական աշխատանքների համար հայտարարվել է ՀՀ Ֆինանսների նախարարության և «Գնումների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հաստատված ՇՀԱՇԲ -11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների շրջանակային մրցույթ: Մրցույթի հաղթող է ճանաչվել «Գասպրինտ» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր, իսկ շրջանակային մրցույթի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է լիազոր մարմին՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն:

Ոչ բյուջեից «Նորավանք» ԳԿՀ-ն 2011թ. ստացել է **17** մլն դրամ: Ստացված միջոցների և կատարված ծախսերի մասին տե՛ս *Հավելված 12-ում*:

Հայագիտական կենտրոնի հրատարակումները

2011թ. կենտրոնի աշխատակիցները հեղինակել են 2 գիրք և 45 հոդված, մասնակցել 22 սեմինարների և (այդ թվում՝ միջազգային գիտաժողովների, տվել են մի շարք հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ:

Գրքեր (2)

1. Ա.Սիմավորյան, Վ.Հովյան, «Ռուսաստանի Դաշնության հայության կրոնադավանանքային կողմնորոշումները», Երևան, 2011թ.:
2. Է.Դանիելյան, Գ.Հարությունյան, Ա.Սիմավորյան, Վ.Հովյան, Հ.Հովհաննիսյան, Ռ.Մելքոնյան, «Սփյուռքի դավանանքային հատվածների խնդիրները և հնարավորությունները», Երևան, 2011թ.:

Հոդվածներ (45)

1. Արեստակես Սիմավորյան, Վահրամ Հովյան, Կրոնական հանդուրժողականությունն արդի հասարակությունում, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 1 (17):
2. Արեստակես Սիմավորյան, Թուրքիայի հայ կաթոլիկների խնդիրների շուրջ, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 3 (19):
3. Արեստակես Սիմավորյան, Թուրքիա-թուրքական աշխարհի հարաբերությունների շուրջ, Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, 2011թ., թիվ 2 (14):
4. Արեստակես Սիմավորյան, Գաղափարախօսական հոսանքները, Թուրքիայի արտաքին քաղաքականութեան պարունակում // Ազդակ, 2011, 10 հունվար, էջ 4, 5:
5. Արեստակես Սիմավորյան, Կանխատեսումներ Թուրքիայի ապագայի շուրջ, 2011թ., թիվ 4 (20):
6. Արեստակես Սիմավորյան, Լեհաստանի հայ կաթոլիկները, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 5 (21):
7. Արեստակես Սիմավորյան, Հայ կաթողիկե համայնքի հոգևոր եկեղեցական խնդիրները Ռուսաստանի Դաշնությունում, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 6 (22):
8. Արիստակես Սիմավորյան, Թուրքիա-թուրքական աշխարհի յարաբերությունների շուրջ, Ալիք, 07.04. 2011:
9. Арестакес Симаворян, Об армянах-католиках Турции, Византийское Наследство, 25-26 (3-4), 2011г.
10. Arestakes Simavoryan, La communauté catholique arménienne en Russie, Nouvelles d'Arménie Magazine, 31.03 2011:
11. Թամարա Վարդանյան, Թիֆլիսահայություն. նոր իրողություններ, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 2 (18):
12. Թամարա Վարդանյան, Թուրք-վրացական «մշակութային» երկխոսության քաղաքական ենթատեքստը, Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, 2011թ., թիվ 3 (15):
13. Թամարա Վարդանյան, «Թիֆլիսի հայկական դպրոցներ. պատմության ավարտ», «Գլոբուս Ազգային անվտանգություն», 2011թ., թիվ 6 (22):

14. Արեստակէս Սիմավորյան, Վահրամ Հովյան, Կրօնական հանդուրժողականությունն արդի հասարակությունում, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 1 (17):
15. Վահրամ Հովյան, Բուլղարիայի հայ ավետարանական համայնքը, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 2 (18):
16. Վահրամ Հովյան, Եգիպտոսի հայ ավետարանական համայնքը, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 3 (19):
17. Վ.Հովյան, Իրաքի հայ ավետարանական համայնքը, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 4 (20):
18. Վ.Հովյան, Բուլղարիայի հայ համայնքը, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 5 (21):
19. Վ.Հովյան, Ռուսաստանի հայ ավետարանական համայնքի արդի վիճակը, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 6 (22):
20. Տիգրան Ղանալանյան, Վրաստանի հայ բողոքական համայնքը, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 1 (17):
21. Տիգրան Ղանալանյան, Հարավային Ամերիկայի հայ բողոքական համայնքները, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 2 (18):
22. Տիգրան Ղանալանյան, Չեխիայի հայ համայնքի կրթական խնդիրները, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011, թիվ 5 (21):
23. Տիգրան Ղանալանյան, Հայոց Նյուրնբերգը, «Պատմություն և մշակույթ» ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայագիտական հանդես, հ. Ա, Երևան, 2011:
24. Տիգրան Ղանալանյան, Ռուսաստանի հայալեզու տպագրությունը և պարբերականները. համառոտ ակնարկ, «ԵՊՀ ՌԻՓԸ գիտական հանդես», Ա, Երևան, 2011:
25. Ռուբեն Մելքոնյան, Թուրքական նեոսոմանիզմի քաղաքականության և արաբական աշխարհի իրադարձությունների շուրջ, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 2 (18):
26. Ռուբեն Մելքոնյան, Թուրքիա. էթնիկ ինքնության խնդիրների շուրջ, Հանրապետական, 2011թ., թիվ 1 (87):
27. Ռուբեն Մելքոնյան, Նեոսոմանիզմը և արաբական աշխարհի իրադարձությունները, Հանրապետական, 2011թ., թիվ 3 (89):
28. Ռուբեն Մելքոնյան, Թուրքիայի «հայկական քաղաքականության» արդի միտումների շուրջ, Հանրապետական, 2011թ., թիվ 5 (91):
29. Ռուբեն Մելքոնյան, Թուրքիայի չերքեզների արդի խնդիրների մասին, Հանրապետական, 2011թ., թիվ 6 (92):
30. Ռուբեն Մելքոնյան, Ջարգացումներ Թուրքիայի ուժացած հայության շրջանում. Դիարբեքիր, Հանրապետական, 2011թ., թիվ 7 (93):
31. Ռուբեն Մելքոնյան, Թուրքիայի էթնոքաղաքական արդի միտումների շուրջ, Հանրապետական, 2011թ., թիվ 8 (94):
32. Ռուբեն Մելքոնյան, Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում, Հանրապետական, 2011թ., թիվ 10 (96):
33. Ռուբեն Մելքոնյան, Ջարգացումներ «Դերսիմի դեպքերի» շուրջ, Հանրապետական, 2011թ., թիվ 11 (97):
34. Ռուբեն Մելքոնյան, Թուրքիայի հայության կրթական խնդիրների շուրջ, 21-րդ ԴԱԸ, Երևան, 2011, թիվ 4:

35. Ռուբեն Մելքոնյան, Մկրտիչ Շելեֆյան. վերջին հայ պատգամավորը թուրքական խորհրդարանում, 21-րդ ԴԱԸ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2011, թիվ 5:
36. Рубен Мелконян, Об образовательных проблемах армян Турции, 21-й век, 2011, № 3 (19).
37. Ruben Melkonyan, About the Educational Problems of Turkey's Armenianness, 21-st Century, 2011, № 1 (9).
38. Ruben Melkonyan, On Turkish Policy of Neo-Ottomanism, Europe & Orient, Alfortville-Paris, 2011, N 12:
39. Ruben Melkonyan, Image of Islamized Armenian Women in Modern Turkish Literature, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2011, հ. 7:
40. Էդուարդ Դանիելյան, Հայաստան-Եգիպտոս. հայագիտական կամուրջ, Գլոբուս Ազգային անվտանգություն, 2011թ., թիվ 1 (17):
41. Էդուարդ Դանիելյան, Հայոց քաղաքակրթական ներդրումը հին և միջնադարյան տնտեսական ու աշխարհաքաղաքական գործընթացներում, «Օովի մշակույթը մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսություններում», Երևան, 2011:
42. Эдуард Л. Даниелян, Антиисторическая лихорадка поборников "Кавказской платформы", Голос Армении, 14 июнь, 2011, No 63 (20136):
43. Эдуард Л. Даниелян, ДНК через тысячелетия, Голос Армении, 5 апрель, 2011, No 34 (20107):
44. Эдуард Л. Даниелян, Историческая справедливость против воинствующего мракобесия, 21-й век, 2011, № 3 (19).
45. Eduard L. Danielyan, Civilizational Factors of Armenian Sea Trade Development and the International Competition in the 17-th Century, 21-st Century, 2011, № 1 (9).

Զեկույցներ սեմինարներում և գիտաժողովներում (22)

1. Արեստակես Միմավորյան, «Թուրքական վերլուծական կառույցների զարգացման փուլերը», զեկույց «Ազգային անվտանգության հիմնախնդիրները» Ամառային դպրոց-գիտաժողովում, 25.07.2011:
2. Արեստակես Միմավորյան, Վահրամ Հովյան, «Հայության դավանանքային հատվածների համախմբման ձևերը և մեխանիզմները», զեկույց «Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսում, Երևան, 9/10.12.2011:
3. Արեստակես Միմավորյան, «Թուրքական ուղեղային կենտրոնների զարգացման փուլերը», զեկույց «Նորավանք» ԳԿՀ սեմինարում, 28.09.2011:
4. Թամարա Վարդանյան, «Ազգայնականության տեսություն. ներածություն» ելույթ, միջառարկայական հայագիտական երեկոյան դպրոց, 18.02.2011, Երևան:
5. Թամարա Վարդանյան, «Հայկական ազգայնականության բնույթն ու էությունը», ելույթ, միջառարկայական հայագիտական երեկոյան դպրոց, 25.02.2011, Երևան:
6. Тамара Варданян, Основные характеристики развития исторической науки в Армении», Միջազգային գիտաժողով "Methodology of History", Одесса, Украина, 02.07. 2011.

7. Tamara Vardanyan, "In Search of "Lenin": Post-Soviet Social discourse around the "Central Monument" of the Capital (Armenia)", Միջազգային կոնֆերանս "Gains and failures of the last two decades of development in post-soviet countries", Chişinău, Moldova, 05.12.2011.
8. Վահրամ Հովյան, Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքները, զեկույց «Նորավանք» ԳԿՀ սեմինարում, 28.11.2011:
9. Արեստակես Սիմավորյան, Վահրամ Հովյան, Հայության դավանանքային հատվածների համախմբման ձևերը և մեխանիզմները, զեկույց «Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսում, Երևան, 9/10.12.2011:
10. Էդուարդ Դանիելյան, Հայաստանի քաղաքակրթական ներդրումը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ և արդի մարտահրավերները, զեկուցում՝ կարդացված «Հայաստանի քաղաքակրթական ներդրումը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ» միջազգային գիտաժողովում, Երևան, 21/23.11.2011:
11. Էդուարդ Դանիելյան, Գարեգին Նժդեհի փիլիսոփայական հայացքների հայագիտական հիմքը, զեկուցում՝ կարդացված Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանում, ՀՀ Սյունիքի մարզ, Տաթևի վանական համալիր, 26/27.04.2011:
12. Էդուարդ Դանիելյան, Հայոց պատմության գաղափարական ներուժը և տեղեկատվական պատերազմը, «Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը տեղեկատվության դարաշրջանում. նոր մարտահրավերներ» երիտասարդական գիտագործնական կոնֆերանս, Ստեփանակերտ, 28.10.2011:
13. Էդուարդ Դանիելյան, Գարեգին Նժդեհի գաղափարախոսության նշանակությունը երիտասարդ սերնդի դաստիարակության գործում, գիտաժողով «Գարեգին Նժդեհի գործունեությունը սփյուռքում», 15.12.2011:
14. Էդուարդ Դանիելյան, Արցախյան հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության, ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախաձեռնած հանրապետական գիտաժողով, «Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության», Երևան, 04/06.05.2011:
15. Эдуард Л. Даниелян, Философское осмысление истории Армении в историографическом контексте российско-армянского цивилизационного диалога, Международная научная конференция «Армения в диалоге цивилизаций», 28.04.2011, Нижний Новгород.
16. Տիգրան Ղանալանյան, Ադրբեջանում հայերի ցեղասպանության նշանակությունը Արցախյան հիմնախնդրի կարգավորման համատեքստում, «Արցախյան հիմնահարցի իրավաբանական, քաղաքական և պատմական ասպեկտները» միջբուհական գիտաժողով, 12.05.2011, Երևան:
17. Տիգրան Ղանալանյան, Սփյուռքահայության հայրենադարձությունը հետպատերազմյան տարիներին, «Երկրորդ աշխարհամարտի հետևանքները» միջբուհական գիտաժողով, 17.05.2011, Երևան:
18. Տիգրան Ղանալանյան, «Բաշ-Ապարանի ճակատամարտի պատմական նշանակությունը», Բաշ-Ապարանի հերոսամարտի 93-ամյակին նվիրված «Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը» խորագրով միջբուհական գիտաժողով, 27.05.2011, ք. Երևան:

19. Տիգրան Ղանալանյան, Հայրենադարձության հիմնախնդիրը. խորհրդային շրջանի ներգաղթի պատմական դասերը», ՀՀ և ԼՂՀ անկախության 20-ամյակին նվիրված «ՀՀ և ԼՂՀ. Ժամանակակից մարտահրավերներ և զարգացման հեռանկարներ» խորագիրը կրող միջբուհական ուսանողական գիտաժողով, 14.09.2011, ք. Երևան:
20. Տիգրան Ղանալանյան, «Մեծ հայրենադարձության հիմնական արդյունքները և հետևանքները», «Սփյուռքահայ հիմնախնդիրները և սփյուռքահայ երիտասարդությունը» գիտաժողով, 22.11.2011, ք. Երևան:
21. Ռուբեն Մելքոնյան, Թուրքական իշխանությունների քաղաքականությունը հայ համայնքի նկատմամբ, «Հայոց ցեղասպանության գիտակցման կառուցումը Թուրքիայում», Միջազգային գիտաժողով, 03. 15. 2011, Երևան:
22. Ռուբեն Մելքոնյան, Իսլամացված հայերի թեմայի ուսումնասիրությունը. խնդիրներ և հեռանկարներ, զեկույց «Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսում, Երևան, 9/10.12.2011:

**ՀՀ տեղեկատվական տարածքի
իդեոլոգեմների ուսումնասիրություն**

Խնդրի դրվածքը և արդի վիճակը

Հայաստանի հանրության ընդհանրական արժեքային համակարգում ներկայումս ընթանում են բովանդակային փոխակերպումներ: Խորհրդային դարաշրջանից ժառանգված արժեքային համակարգի փոխակերպմանը զուգընթաց՝ Հայաստանում ընթանում են պաշտոնապես ընդունված, եվրաինտեգրմանն ուղղորդված գործընթացներ, որոնք հիմնականում համընկնում են արդի գլոբալացման միտումների հետ՝ բերելով արժեքային նորամուծություններ: Երրորդ վեկտորն առնչվում է Հայության¹ ինքնակազմակերպման և հատկապես Հայաստանի շուրջ կազմակերպման խնդիրներին, որոնք ընթանում են հայկական քաղաքակրթության ու ազգային ինքնության վերարժևորման, ազգային հիմք պարունակող արժեքների և իդեոլոգեմների (արժեքային ծանրաբեռնվածություն ունեցող գաղափարների) վերարտադրության ուղիով: Այդ և հարակից այլ գործընթացները հանգեցնում են Հայաստանում տարահուն արժեքների և իդեոլոգեմների տարածմանը, որոնք և՛ փոխլրացման, և՛ միմյանց հետ հակասության պոտենցիալ ունեն:

Հայաստանի հանրության արժեքային համակարգի փոխակերպումները հետադարձ կապով արտացոլվում են տեղեկատվական դաշտում, որն իր հերթին գտնվում է նաև արտաքին տեղեկատվական հոսքերի ուղղակի ազդեցության տակ: Այդպիսի ազդեցություն ունեն, օրինակ, ռուսական «Первый Канал», «Россия-РТР», «Россия-К» հեռուստաալիքները, Euronews-ը, CNN-ը, «Ամերիկայի ձայն» հեռուստահանդեսը, «Ռուսաստանի ձայն» և «Ազատություն» ռադիոհանդեսները, ինչպես նաև արբանյակային հեռարձակմամբ և ինտերնետով հասանելի բազմաթիվ միջազգային և տարածաշրջանային թերթեր ու հեռուստաալիքներ: Տարածաշրջանային հեռուստաալիքներից առանձնահատուկ տեղ է գրավում ադրբեջանական ATV-INT հեռուստաալիքը՝ իր բազմալեզու, այդ թվում հայալեզու և բացահայտ հակահայկական քարոզչական հաղորդումներով: ՀՀ տեղեկատվական տարածքում որոշակի բաժին ունեն նաև տարաբնույթ կրոնադավանանքային դրսևորումները:

Նման պայմաններում հայաստանյան հանրությունը հայտնվում է արագ փոխակերպվող, տարբեր, իսկ որոշ պարագաներում՝ նաև հակասական արժեքների տարածման դաշտում: Այս իրադրությունը պարունակում է նոր հնարավորություններ, սակայն միաժամանակ լուրջ մարտահրավեր է ՀՀ տեղեկատվական անվտանգությանը:

Ցանկացած հասարակություն ենթադրում է այս կամ այն չափով ընդհանուր մշակույթին-քաղաքակրթությանը պատկանող անհատների փոխհարաբերությունների համակարգ, որտեղ նշանակալի դեր ունի արժեքային համակարգի ընդհանրությունը: Արժեքների ընդհանրությունը բնավ չի նշանակում դրանց անփոփոխելիություն: Դրանք մշտապես վերանայվում են, սակայն պակաս կարևոր չէ արժեքների փոխակերպումների համահասարակական ընթացքը՝ ապահովելու արժեհամակարգի ընդհանրության և ներդաշնակության գերակայությունը: Հայաստանի դեպքում այսպիսի

¹ Հայությունը՝ որպես ողջ աշխարհի հայերի հավաքականությունը ցույց տվող հասկացություն, այլ ոչ որպես հատկանիշ, այստեղ և այլ տեղերում գրված է մեծատառով:

վերանայումները և փոխակերպումները բավական արագացված են, բազմահուն և ուղղված հանրության տարբեր շերտերին:

Արժեքային կողմնորոշումները ձևավորվում կամ վերանայվում են նաև հասարակության մեջ իշխանության և հեղինակության ռեսուրսներին տիրապետողների՝ *կարծիք ձևավորողների* կողմից: Վերջին ժամանակներում նրանց կողմից հասարակության վրա ազդեցության տեղեկատվական հնարավորություններն աճել են՝ զանգվածային հաղորդակցման միջոցների կամ *մեդիաների* զարգացման շնորհիվ. դրանց աճող հասանելիությունը ժամանակակից հասարակությունների ամենակարևոր բնութագրիչներից է:

Զանգվածային հաղորդակցման միջոցները ժամանակակից անձի սոցիալականացման (սոցիալիզացիայի) կարևորագույն գործոններից են: Դրանք կարող են նպաստել ինչպես ընդունված արժեքների կայունացմանը, այնպես էլ դրանց փոխակերպումներին: Կարծիք ձևավորողների լայն շերտերը, հատկապես՝ քաղաքական ոլորտում ընդգրկվածները, մեծ մասամբ տիրապետում են նաև ավանդական զանգվածային լրատվական ռեսուրսներին (հեռուստատեսություն, մամուլ, ռադիո), հետևաբար միայն դրանց ուսումնասիրությունը կարող է բացահայտել տարածվող արժեքների գերակա միտումները: Սակայն իդեոլոգեմների տարածման տեղեկատվական տարածքը միայն ավանդական ՁԼՄ-ով չի սահմանափակվում:

Որոշ կարծիք ձևավորողների խմբերի (օրինակ՝ գիտնականները, դասախոսները, ՀԿ-ների ներկայացուցիչները, բլոգերները) ազդեցության լսարանները զանգվածային չեն, և նրանց հետ հաղորդակցման ուղիներն այլ բնույթ են կրում: Արդի ժամանակներում այդ խմբերը հիմնականում կիրառում են ինտերնետը, մոբայլ տեխնոլոգիաները և ոչ ֆորմալ հաղորդակցման միջոցները: Այս հանգամանքով է պայմանավորված ոչ միայն ավանդական ՁԼՄ-ի, այլև ցանցային լրատվամիջոցների (ինտերնետային լրատվամիջոցներ, բլոգներ, վիրտուալ ցանցեր), ինչպես նաև կարծիք ձևավորողների որոշ խմբերի արժեքային կողմնորոշումների հետազոտման անհրաժեշտությունը: Միայն այս դեպքում հնարավոր կլինի լիարժեք ուսումնասիրել արժեքների տարածման տեղեկատվական տարածքը:

Արժեքների, իդեոլոգեմների և դրանց տարածման մեխանիզմների ուսումնասիրության խնդիրը խիստ հրատապ է և գիտական հետազոտությունների առարկա է ողջ աշխարհում: Հայաստանում արժեքների ուսումնասիրություն իրականացվել է ընդամենը մեկ անգամ, 1998 թվականին՝ միջազգային *World Values Survey* նախագծի շրջանակներում՝ հասարակական կարծիքի ստանդարտացված հարցազրույցի մեթոդով: Այդ հետազոտության արդյունքներից հետևում է, որ Հայաստանը 1998թ. դրությամբ գտնվում է Հարավային Ասիայի և հետխորհրդային երկրների մշակութային տիրույթում, որտեղ գերակայում են ավանդական և գոյապահպանական տիպի արժեքները:

Սակայն արժեքային ի՞նչ ուղղվածությամբ է շարժվում Հայաստանի հանրությունը, և ի՞նչ վերափոխումներ կարող են սպասվել ապագայում՝ կարելի է պարզել տեղեկատվական տարածքում գերակա արժեքների հետազոտման՝ մեդիատեղեկատվության բովանդակության և կարծիք ձևավորողների արժեքային կողմնորոշումների ուսումնասիրության միջոցով:

Մինչդեռ առայսօր Հայաստանի տեղեկատվական տարածքում արժեքային բաղադրիչի լիարժեք ուսումնասիրություն դեռևս չի իրականացվել: Բացակայում են տարածվող արժեքների տեսանկյունից ավանդական և ցանցային լրատվամիջոցների ու կարծիք ձևավորողների կողմնորոշումների գիտական ուսումնասիրություններ:

Ներկայացված խնդիրներն առավել քան արդիական են և հրատապ, քանի որ այսօր մեղիայի ու կարծիք ձևավորողների կողմից մատուցվող իդեոլոգեմներն արդեն մոտ ապագայում կարող են դառնալ հանրության գիտակցության բաղադրիչը և այդպիսով էապես ազդել Հայաստանում ընթացող հասարակական զարգացումների ուղիների վրա:

Այսպիսով, թեմայի հրատապությունից և դրա վերաբերյալ գիտական հետազոտությունների բացակայությունից հետևում է հետազոտության թեմայի հիմնարար բնույթը: Հետազոտությունն ունի նաև կիրառական նշանակություն, քանի որ արդյունքում ստացված էմպիրիկ տվյալները ոչ միայն կբացահայտեն Հայաստանի տեղեկատվական-արժեքային ոլորտում ընթացող պրոցեսների մեխանիզմը, այլև թույլ կտան ուղղորդել այդ գործընթացները տեղեկատվական անվտանգության համատեքստում:

Գիտական նպատակները

ՀՀ տեղեկատվական տարածքում իդեոլոգեմների ուսումնասիրությունը հետապնդում է հիմնարար (տեսական-ճանաչողական), մեթոդաբանական և կիրառական նպատակներ:

1. Հետազոտության հիմնարար նպատակն է բացահայտել մեղիաների և կարծիք ձևավորողների կողմից Հայաստանի տեղեկատվական տարածքում ձևավորվող արժեքները և իդեոլոգեմները և դասակարգել դրանք ՀՀ տեղեկատվական անվտանգության տեսանկյունից:
2. Մեթոդաբանական նպատակն է մշակել արժեքների տարածման տեսանկյունից մեղիա-տեքստերի վերլուծության մեթոդաբանություն՝ համապատասխան մեթոդական գործիքաշարով: Նշենք, որ արժեքների տեսանկյունից մեղիաների վերլուծության մեթոդաբանություն հայտնի չէ: Մասնագիտական գրականությունում հայտնի են միայն առանձին իդեոլոգեմների (օրինակ՝ թշնամի, տոլերանտություն և այլն) շուրջ մեղիա-բովանդակության մոնիթորինգի փորձեր:
3. Կիրառական նպատակներն են.
 - ՀՀ տեղեկատվական տարածքում գերակայող արժեքների և փոխակերպման միտումների, ինչպես նաև դրանց՝ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգին համապատասխանության վերաբերյալ տվյալների շուրջ առաջարկներ ներկայացնել տեղեկատվական ոլորտը համակարգող պետական և ազգային կառույցներին, ինչը թույլ կտա նրանց մշակել տեղեկատվական քաղաքականության ռազմավարություն: Ստացված տվյալների հրապարակումը և տարածումը մեղիաների միջոցով կնպաստի ազգային շահերին համապատասխանող հասարակական կարծիքի ձևավորմանը:
 - Վարկանիշավորել և հրապարակել մեղիաները՝ ըստ ՀՀ տեղեկատվական անվտանգության դրույթներին համապատասխան չափանիշի:
 - Հետազոտության ընթացքում մշակված մեթոդաբանությունը և մեղիաների վարկանիշավորման մեխանիզմը հիմք ծառայեցնել Հայաստանում համանման պարբերական ուսումնասիրությունների իրականացման և տարածվող արժեքների ցուցանիշների մշտական մոնիթորինգի համար:

Հետազոտության ծրագիրը

Մեթոդաբանություն

Հետազոտության *առարկան* է արդի Հայաստանի տեղեկատվական տարածքում առկա *արժեքների ու իդեոլոգեմների գերակայության ցուցանիշը*: Իսկ *օբյեկտն* են հանդիսանում արժեքների ու իդեոլոգեմների տարածումն ապահովող մեդիատորները՝ *մեդիաները և կարծիք ձևավորողները*: Հետազոտության *նպատակն* է Հայաստանի տեղեկատվական տարածքի արժեքային բովանդակության ուսումնասիրումը, ինչպես նաև գերակայող արժեքների ու իդեոլոգեմների ցուցանիշների բացահայտումը:

Հետազոտության *առաջնային խնդիրները* երկուսն են.

1. Մոնիթորինգի և վերլուծության ենթարկել տարբեր ուղղվածության մեդիաների տեղեկատվության բովանդակությունը՝ գերակա արժեքների և իդեոլոգեմների տարածման տեսանկյունից:
2. Ուսումնասիրել Հայաստանում կարծիք ձևավորողների խմբերի արժեքային կողմնորոշումները և իրենց գործունեության ընթացքում դրանց տարածման հնարավորությունները և համատեքստը:

Նշված խնդիրներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ *ենթախնդիրները*.

1. Նկարագրել Հայաստանում արժեքային համակարգի տարածման սոցիալ-քաղաքական համատեքստը, գործընթացի վրա ազդող գործոնները:
2. Բնութագրել հայաստանյան մեդիա-դաշտը և կարծիք ձևավորողների առկա խմբերը:
3. Առանձնացնել, խմբավորել և տիպաբանել համակարգաստեղծ ու հանրայնորեն նշանակալի արժեքներն ու իդեոլոգեմները:
4. Վերլուծել մեդիայի և կարծիք ձևավորողների կողմից արժեքների տարածման մեխանիզմները:
5. Բացահայտել տարածվող արժեքների հնարավոր հակասությունները և դրանց պատճառները:
6. Համադրել Հայաստանի տեղեկատվական տարածքում գերակայող արժեքները հանրության տեղեկատվական (այդ թվում՝ հոգևոր, հոգեբանական և մտավոր) անվտանգության հայեցակարգի հիմնադրույթների հետ:
7. Ուսումնասիրել առանձին մեդիաների և կարծիք ձևավորողների դերն այս կամ այն տիպի արժեքների տարածման գործում:

Հայեցակարգային դրույթներ. ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմների ուսումնասիրությունը հիմնվում է այն տեսական դրույթի վրա, որ արդի իրողություններում հասարակության մեջ արժեքների տարածումն ընթանում է հիմնականում ավանդական ու ցանցային մեդիաների և կարծիք ձևավորողների միջոցով: Իսկ արժեքների տարածման և փոխակերպման գործընթացն անմիջական առնչություն ունի հասարակության տեղեկատվական անվտանգության և ընդհանուր զարգացման հեռանկարների հետ: Հետազոտությունն իրականացվում է հաղորդակցության և մեդիա ուսումնասիրությունների միջդիսցիպլինար ոլորտում, գիտական-տեսական հիմք են ծառայում սոցիոլոգիան, սոցիալական հոգեբանությունը, մշակույթի սոցիոլոգիան, ՋԼՄ սոցիոլոգիան, քարոզչության ու հասարակայնության հետ կապերի (PR) և տեղեկատվական անվտանգության տեսությունները:

Մեթոդիկա

Հայաստանի տեղեկատվական տարածքում գերակայող արժեքների ու իդեոլոգեմների ցուցանիշների հետազոտումը՝ մեդիա-բովանդակության և կարծիք ձևավորողների արժեքային կողմնորոշումների ուսումնասիրությամբ համակողմանիորեն իրականացնելու համար՝ կիրառվելու են սոցիոլոգիական ուսումնասիրությունների և՛ քանակական, և՛ որակական մեթոդները: Այս մոտեցումը թույլ կտա դուրս բերել օբյեկտիվ և համեմատելի էմպիրիկ քանակական տվյալներ՝ միաժամանակ դրանք բացատրել և լրացնել որակական տեղեկատվությամբ: Այսպիսով, հետազոտության շրջանակներում որպես առաջնային տեղեկատվության հավաքագրման հիմնական մեթոդներ կկիրառվեն **կոնտենտ անալիզի** (մեդիա-բովանդակության քանակական վերլուծության) և **ֆոկուս խմբերի** (կարծիք ձևավորողների հետ ֆոկուս խմբային հարցազրույցների) մեթոդները, իսկ լրացուցիչ մեթոդներ՝ *փորձագիտական հարցումը* և *ֆոկուսավորված հարցազրույցը*:

Մեդիա-տեքստերի կոնտենտ անալիզի հիմնական նպատակն է յուրաքանչյուր մեդիայի կողմից տարածվող արժեքային կողմնորոշումների գերակայության օբյեկտիվ չափումը: **Վերլուծության առարկան** կհանդիսանա առանձին արժեքների ցուցանիշը հասարակական, քաղաքական մեդիա-տեքստերում: Այս մեթոդի միջոցով հնարավոր կլինի ստանալ տեղեկատվություն, թե ինչ գերակա արժեքներ և իդեոլոգեմներ են առկա մեդիա-տեքստերում և ինչպիսի համամասնությամբ: **Վերլուծության օբյեկտը** կհանդիսանան ավանդական և ցանցային մեդիաները:

Ընտրանք. Մեդիաների ընտրությունը կիրականացվի տիպային ընտրանքի եղանակով, ըստ հետևյալ չափանիշների՝ 1) *մեդիայի տեսակը* (ՀՏ, ռադիո, մամուլ, ինտերնետային լրատվական կայքեր, բլոգներ), 2) *սփռման աշխարհագրությունը*, 3) *լսարանի մեծությունը*: Մեդիայի տեսակի ընտրության չափանիշը կապահովի տարբեր լսարանների վրա ազդող մեդիաների տիպային ներկայացուցչականությունը: Մնացյալ չափանիշները թույլ կտան յուրաքանչյուր մեդիայի տեսակի մեջ ընտրել առավել մեծ ազդեցության լսարան ունեցողներին: Նախապես կիրականացվի ընտրված մեդիաների՝ 2-4 շաբաթվա մոնիթորինգ, որով կառանձնացվեն միայն արժեքային հազեցվածությամբ մեդիա-տեքստերը և դրանք կենթարկվեն կոնտենտ վերլուծության, որտեղ **վերլուծության միավոր** կհանդիսանա մեկ ամբողջական տեղեկատվական նյութը, իսկ **հաշվարկման միավորը**՝ դրական, բացասական կամ չեզոք երանգավորում ունեցող արժեքային իմաստ պարունակող բառը կամ բառակապակցությունը: Տվյալները վերլուծության կենթարկվեն SPSS (Statistical Package for Social Science) ծրագրի միջոցով:

Ֆոկուս-խմբերի մեթոդի միջոցով կհետազոտվեն կարծիք ձևավորողների առանձին խմբերի արժեքային կողմնորոշումների առանձնահատկությունները, դրանց տարածման հնարավորությունները և սոցիալական համատեքստը: Այսինքն՝ կուսումնասիրենք, թե կարծիք ձևավորողների որ խմբերն ինչ գերակա արժեքային կողմնորոշումներ ունեն, ինչպես և որքանով են կարողանում դրանք տարածել, որ սոցիալական խմբերին է ուղղված տարածման վեկտորը, որքանով է նրանց կողմից տարածվող արժեքային համակարգը համապատասխանում ՀՀ տեղեկատվական անվտանգության պահանջներին: Ուսումնասիրության **առարկան** կհանդիսանան կարծիք ձևավորողների կողմից տարածվող արժեքային կողմնորոշումները, իսկ **օբյեկտը**՝ կարծիք ձևավորողները:

Ընտրանք. Կարծիք ձևավորողների ընտրությունը կիրականացվի ձևակույտի մեթոդով՝ հետևյալ խմբերից. *քաղաքական գործիչներ, խմբագիրներ, լրագրող-մեկնաբաններ, հրապարակախոս-գրողներ, հասարակական գործիչներ, ՀԿ ներկայացուցիչներ, հասարակագետ-դասախոսներ, սոցիալապես ակտիվ*

գիտնականներ: Հաշվի առնելով ուսումնասիրության օբյեկտի առանձնահատկությունները կկազմավորվեն հոմոգեն խմբեր՝ կարծիք ձևավորողների միևնույն խմբի ներկայացուցիչներից: Ֆոկուս-խմբերին կմասնակցեն 7-10 հոգի: Հաշվի առնելով կարծիք ձևավորողների որոշ խմբերի դժվարհասանելիությունը՝ որոշ դեպքերում որպես լրացուցիչ մեթոդ կկիրառվի անհատական **ֆոկուսավորված հարցազրույցը** ֆոկուս-խմբի համար նախատեսված հարցաշարով:

Որպես լրացուցիչ մեթոդ հետազոտության նախնական փուլում կկիրառվի **փորձագիտական հարցազրույցը**, որը կօգնի առանձնացնել և տիպաբանել արդի Հայաստանում տարածվող գերակա արժեքներն ու իդեոլոգեմները, որոնց գերակայության ցուցանիշը կհետազոտվի մեդիա-բովանդակության վերլուծության և կարծիք ձևավորողների արժեքային կողմնորոշումների ուսումնասիրության միջոցով: Փորձագետների ընտրանքը կիրականացվի ձևակույտի մեթոդով՝ որպես չափանիշ ընտրելով կոմպետենտությունը Հայաստանի հասարակության մշակույթի և արժեքային համակարգի ոլորտում:

Հետազոտության փուլերը. Հետազոտությունը կիրականացվի նախապատրաստական, դաշտային աշխատանքների և վերլուծական փուլերով, որոնց քայլերը և ժամանակային բաշխումը ներկայացված է *Աղյուսակ 1*-ում:

Աղյուսակ 1

Քայլեր	I տարի				II տարի														
	I	II	III	IV	I	II	III	IV											
Տեսության ուսումնասիրություն, փորձագիտ. հարցազրույցներ, մեթոդաբանության մշակում	■	■	■																
Գործիքների մշակում և փորձարկում, մեթոդաբանության վերջնականացում, ընտրանքի կազմում			■	■															
Դաշտային աշխատանք (կոնտենտ անալիզ, ֆոկուս խմբեր)				■	■	■	■	■											
Առաջնային ինֆ. (քանակական և որակական) մշակում, նախնական վերլուծություն						■	■	■	■	■	■								
Էմպիրիկ տվյալների համադրում և վերլուծություն								■	■	■	■	■							
Գրքի կազմում և հրատարակում																	■	■	■

Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի հրատարակումները

2011թ. կենտրոնի աշխատակիցները հեղինակել են 31 հոդված, 1 մենագրություն, ղեկավարել 2 գրքի հեղինակային խմբի աշխատանքները, նախաձեռնել 2 գիտաժողով, ելույթներով մասնակցել 15 գիտաժողովի, տվել են մի շարք հարցազրույցներ և մամուլի ասուլիսներ:

Գրքեր (3)

1. «Մեր հաղթանակները», Հատոր Գ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2011թ.:
2. «Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները», Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2011թ.:
3. *Гагик Арутюнян*, «Распад «системы» и формирование будущего», Ереван, фонд «Нораванк», 2011г., 262 стр.

Հոդվածներ (31)

1. Գագիկ Հարությունյան, «Կանխատեսումների մասին», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #1 (17), Երևան, 2011
2. Գագիկ Հարությունյան, «Վերլուծական կենտրոնների կազմակերպման շուրջ», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #3 (19), Երևան, 2011
3. Գագիկ Հարությունյան, «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը, «21-րդ ԴԱԸ», 1 (35), Երևան, 2011
4. Գագիկ Հարությունյան, Կանխատեսումները և ապագայի ձևավորումը, «21-րդ ԴԱԸ», 2 (36), Երևան, 2011
5. Գագիկ Հարությունյան, «Գրավիր Ուոլ-սթրիթը» և «փրկիր մեր հոգիները», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #6 (22), Երևան, 2011
6. Աննա Ժամակոչյան, «Ադրբեջանական հայալեզու հաղորդումների բնութագրիչները», «21-րդ ԴԱԸ», 2 (36), Երևան, 2011
7. Աննա Ժամակոչյան, Դիանա Գալստյան, «Ադրբեջանական հայալեզու հեռուստահաղորդումների ինֆորմացիոնականությունը», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #1 (17), Երևան, 2011
8. Աննա Ժամակոչյան, «Բովանդակային վերլուծությունը որպես մեդիատեքստերի ուսումնասիրության մեթոդ», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #3 (19), Երևան, 2011
9. Աննա Ժամակոչյան, «Նոր մեդիաներ. գլոբալ շուկայի ֆենոմենը», Անալիտիկոն, #4, <http://analyticon.org/ARCHIVE/2011/april/april-2011-new-media.pdf>:
10. Աննա Ժամակոչյան, «Ադրբեջանական ATV International-ի տեղեկատվական քաղաքականությունը», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #6 (22), Երևան, 2011
11. Դիանա Գալստյան, Վարուժան Գեղամյան, «Ադրբեջանի վերլուծական կենտրոնները», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #3 (19), Երևան, 2011
12. Դիանա Գալստյան, Վարուժան Գեղամյան, «Նոր իրողություններ Ադրբեջանի հետազոտական կենտրոնների ոլորտում», «21-րդ ԴԱԸ», 4 (38), Երևան, 2011
13. Սամվել Մարտիրոսյան, «Ցանցը՝ տեղեկատվության հիմնական աղբյուր», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #1 (17), Երևան, 2011

14. Սամվել Մարտիրոսյան, «Հեղափոխական շարժումներն արաբական երկրներում և դրանց ուղեկցող տեղեկատվական հոսքերը», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #2 (18), Երևան, 2011
15. Սամվել Մարտիրոսյան, «Սոցիալական ցանցերը ինտերնետի հայկական հատվածում», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #3 (19), Երևան, 2011
16. Սամվել Մարտիրոսյան, «Ավանդական եւ այլընտրանքային մեդիաների սիմբիոզ», Անալիտիկոն, #4, <http://analyticon.org/ARCHIVE/2011/april/april-2011-new-media.pdf>:
17. Սամվել Մարտիրոսյան, «Բջջային կապով քաղաքացիական թղթակցություն. հնարավորությունները և խնդիրները», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #4 (20), Երևան, 2011
18. Սամվել Մարտիրոսյան, «Սոցիալական ցանցերի դարաշրջանը. փոփոխություններ տեղեկատվական դաշտում», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #6 (22), Երևան, 2011
19. Սոնա Մանուսյան, «Հետխորհրդային երկրների երիտասարդ հայերի ինքնության խնդիրները», «21-րդ ԴԱԸ», 1 (35), Երևան, 2011
20. Սոնա Մանուսյան, «Գիտելիքը, նորարարությունը և կրեատիվությունը զարգացման ազգային հեռանկարներում», «Գլոբուս Ազգային անվտանգություն», #5 (21), Երևան, 2011
21. Վարուժան Գեղամյան, «Facebook-ը` ազատ խոսքի հարթակ Ադրբեջանում», Անալիտիկոն, #4, <http://analyticon.org/ARCHIVE/2011/april/april-2011-new-media.pdf>:
22. Гагик Арутюнян, «Мозговые центры» и национальная безопасность, «21-й ВЕК», № 1 (17), 2011г.
23. Гагик Арутюнян, «Прогнозирование и формирование будущего», «21-й ВЕК», № 3 (19), 2011г.
24. Самвел Мартиросян, Весна армянская: недоегипетский сценарий, ИА «Росбалт», <http://www.rosbalt.ru/kavkaz/2011/03/22/831090.html>
25. Самвел Мартиросян, Баку — Ереван: шаг до войны или мира, ИА «Росбалт», <http://www.rosbalt.ru/kavkaz/2011/03/06/825963.html>
26. Самвел Мартиросян, Странности армяно-российской дружбы, ИА «Росбалт», <http://www.rosbalt.ru/exussr/2011/09/30/895960.html>
27. Самвел Мартиросян, ГКЧП: шанс упущен навсегда, ИА «Росбалт», <http://www.rosbalt.ru/exussr/2011/08/19/881265.html>
28. Самвел Мартиросян, Война, застывшая в янтаре, ИА «Росбалт», <http://www.rosbalt.ru/exussr/2011/09/20/892109.html>
29. Самвел Мартиросян, Жизнь после ВТО, ИА «Росбалт», <http://www.rosbalt.ru/exussr/2011/11/11/911448.html>
30. Gagik Harutyunyan, Homo virtualicus in the context of post-democracy and information security, «21st CENTURY», № 1 (9), 2011
31. Sona Manusyan, The issues of identity among the young armenians in the post-soviet countries, «21st CENTURY», № 1 (9), 2011

Զեկույցներ սեմինարներում և գիտաժողովներում (15)

1. Գագիկ Հարությունյան, «Արդի Հայաստան. նոր պետականություն և նոր հիմնախնդիրներ», «Ազգային անվտանգության հիմնախնդիրները», ամառային դպրոց-գիտաժողով, «Նորավանք» ԳԿՀ, 18.07.2011, Երևան:
2. Գագիկ Հարությունյան, «Արաբական հեղափոխությունները և կառավարման սցենարները», «Ազգային անվտանգության հիմնախնդիրները», սեմինար, «Նորավանք» ԳԿՀ, 29.11.2011, Երևան:
3. Գագիկ Հարությունյան, «Արաբական հեղափոխության հետևանքները և հեռանկարները», «Քաղաքակրթությունների երկխոսություն» IX համաշխարհային հասարակական համաժողով, հոկտեմբեր 7-11, 2011թ. Հռոդոս, Հունաստան:
4. Գագիկ Հարությունյան, «Հայության կրոնադավանանքային խնդիրները գլոբալ զարգացումների համատեքստում», «Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ» միջազգային գիտագործնական գիտաժողով, դեկտեմբեր 9-10, 2011թ., Երևան:
5. Աննա Ժամակոչյան, «Ադրբեջանի հայալեզու հեռուստահաղորդումները ՀՀ տեղեկատվական անվտանգության համատեքստում», «Ազգային անվտանգության հիմնախնդիրները» ամառային դպրոց-գիտաժողով, «Նորավանք» ԳԿՀ, 27.07.2011, Երևան:
6. Սամվել Մարտիրոսյան, «Քարոզչամեթոդ 2.0՝ հակահայ քարոզչության և հակազդման դաշտ», «Ադրբեջանական հակահայ քարոզչությունը և հակազդման ուղղությունները» գիտաժողով, «Նորավանք» ԳԿՀ, 22.04.2011, Երևան:
7. Սամվել Մարտիրոսյան, «Քաղաքացիական և քաղաքական քարոզչությունը նոր տեխնոլոգիաների միջոցով», «Ազգային անվտանգության հիմնախնդիրները» ամառային դպրոց-գիտաժողով, «Նորավանք» ԳԿՀ, 29.07.2011, Երևան:
8. Սամվել Մարտիրոսյան, "Internet and freedom of expression: Armenia 2007-2011", "Pluralism and Internet governance: 8th South Caucasus Media Conference", հոկտեմբեր 20-21, 2011, Թբիլիսի, Վրաստան:
9. Սամվել Մարտիրոսյան, "Broadening the social discourse in Armenia through new media technologies", "The Second EU-Armenia Civil Society Seminar on Human Rights", նոյեմբեր 8-9, 2011, Ծաղկաձոր:
10. Самвел Мартиросян, "Развитие медиаплатформ нового поколения и общественные процессы", Форум Европейских и Азиатских Медиа, նոյեմբեր 20-22, 2011, Աստանա, Ղազախստան:
11. Վարուժան Գեղամյան, «Ադրբեջանի հակահայ քարոզչության հիմնական ուղղությունները», «Նոր Արևելք, նոր իրողություններ» միջբուհական գիտաժողով, 06.04.2011, Երևան:
12. Վարուժան Գեղամյան, «Ադրբեջանի հակահայ քարոզչությունը պատմության և աշխարհագրության դասագրքերում», «Ադրբեջանական հակահայ քարոզչությունը և հակազդման ուղղությունները» գիտաժողով, «Նորավանք» ԳԿՀ, 22.04.2011, Երևան:
13. Վարուժան Գեղամյան, «Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը կրթության և մշակույթի ոլորտներում», Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, 23.04.2011, Երևան:
14. Վարուժան Գեղամյան, «Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը կրթության ոլորտում», «Արմատ» ակումբի լրագրողական դպրոց, 17.05.2011, Երևան:
15. Վարուժան Գեղամյան, «Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը գեղարվեստական ֆիլմերի օրինակով», «Արմատ» ակումբի լրագրողական դպրոց, 27.05.2011, Երևան:

Քաղաքական հետազոտությունների կենտրոնի հրատարակումները

2011թ. առաջին կիսամյակում կենտրոնի աշխատանքների շրջանակներում տպագրվել է **48 հոդված**, կարդացվել է **6 զեկույց** գիտաժողովներում:

Հոդվածներ (48)

1. Գագիկ Հարությունյան, Սերգեյ Գրինյան, «Աֆրիկյան աշխարհամասի իրադարձությունները մեծ խաղի հայելում», «21-րդ ԴԱԸ», N 3, 2011
2. Գագիկ Հարությունյան, «Հայկական նոր պետականություն. կայացում և մարտահրավերներ», «21-րդ ԴԱԸ», N 6, 2011
3. Гагик Арутюнян, «Современный этап армяно-российских отношений», 21-й ВЕК, N 2, 2011
4. Сергей Гриняев, Гагик Арутюнян, «События на Африканском континенте в зеркале Большой игры», 21-й ВЕК, N 2, 2011
5. Гагик Арутюнян, «Новая государственность и новые вызовы», 21-й ВЕК, N 4, 2011
6. Гагик Арутюнян, «О некоторых проблемах и перспективах развития российско-армянских отношений», Журнал «Стратегия Развития», #1(2)
7. Гагик Арутюнян, Сергей Гриняев, Революция оптом, Византийское наследие 1-2, 2011
8. Gagik Harutyunyan, New Statehood and new Challenges, "21st Century", N 2, 2011
9. Sergey Grinyaev, Gagik Harutyunyan, Reflecting the events of the African continent in the mirror of the Great game, "21st Century", N 1, 2011
10. Գագիկ Հարությունյան, «Վերլուծական կենտրոնների կազմակերպման շուրջ», Գլոբուս Ազգային անվտանգություն, N 3, 2011
11. Գագիկ Հարությունյան, Սերգեյ Գրինյան, «Նոր աշխարհակարգի կերտման գործընթացը և գլոբալ կառավարման սցենարները», Գլոբուս Ազգային անվտանգություն, N 2, 2011
12. Գագիկ Հարությունյան, «Ռուս-հայկական համագործակցությունը և թուրքական գործոնը», Գլոբուս Ազգային անվտանգություն, N 3, 2011
13. Գագիկ Հարությունյան, «Հայաստանը և ինքնիշխանությունը», Գլոբուս Ազգային անվտանգություն, N 4, 2011
14. Գագիկ Հարությունյան, «Նոր պետականություն և նոր մարտահրավերներ», Գլոբուս Ազգային անվտանգություն, N 5, 2011
15. Սևակ Սարուխանյան, «ՀՀ էներգետիկ անվտանգություն. հիմնական ձեռքբերումները և մարտահրավերները», «21-րդ ԴԱԸ», N 6, 2011
16. Севак Саруханян, «Энергетическая безопасность РА. основные достижения и вызовы», 21-й ВЕК, N 4, 2011
17. Sevak Sarukhanyan, «Energy security of Armenia. Main achievements and opportunities», 21-st Century, #2, 2011
18. Sevak Sarukhanyan, "Armenia's Energy Security Challenges", Turku East Eurasian Review, #2
19. Sevak Sarukhanyan, "Armenia's energy Security and the EU Eastern Neighborhood Policy", contributed for "The South Caucasus and the Eastern Partnership" book, published by Friedrich Ebert Stiftung, 2011

20. Սևակ Սարուխանյան, «Նվեր հեղափոխության օրվան», Գլոբուս Ազգային անվտանգություն, N 2, 2011
21. Սևակ Սարուխանյան, «Իրանը 2011 թվականին. հնարավոր զարգացումներ», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 1, 2011
22. Սևակ Սարուխանյան, «Դիլետանտիզմի, հայրենասիրության և գազի գների մասին», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 2, 2011
23. Սևակ Սարուխանյան, «Ներքաղաքական զարգացումներ Իրանում», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 2, 2011
24. Սևակ Սարուխանյան, «Իրանը, շիական գործոնը և զարգացումներն արաբական աշխարհում», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 3, 2011
25. Սևակ Սարուխանյան, «Քաղաքական գործընթացներն Իրանում», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 4, 2011
26. Սևակ Սարուխանյան, «Իրան. ներքաղաքական և տարածաշրջանային զարգացումներ», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 5, 2011
27. Սևակ Սարուխանյան, «Տարածաշրջանային Էներգետիկ զարգացումների շուրջ», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 6, 2011
28. Սերգեյ Սարգսյան, «Թերթաքարային գազի ուրվականը», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 1, 2011
29. Սերգեյ Սարգսյան, «Թերթաքարային գազի ուրվականը», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 2, 2011
30. Սերգեյ Սարգսյան, «Հայաստանը ռազմաքաղաքական դաշինքների շահերի հատման կետում», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 4, 2011
31. Սերգեյ Սարգսյան, «Թուրքիան ԱՄՆ ՀՀՊ համակարգում. նախնական գնահատական և հնարավոր հեռանկարներ», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 5, 2011
32. Կարեն Վերանյան, «ՀՀ-ն՝ տարածաշրջանի ամենակայուն պետություն. «Ձախողված երկրների ինդեքսը» 2010թ. զեկույցը», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 1, 2011
33. Կարեն Վերանյան, «Հայաստան և Ադրբեջան. կանխելով պատերազմը. Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցը», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 2, 2011
34. Կարեն Վերանյան, «Իսրայելական գործոնն Աբխազիայում», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 3, 2011
35. Կարեն Վերանյան, «Ժողովրդավարության վարկանիշը 2008-2010թթ. «The economist group»-ի զեկույցները», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 3, 2011
36. Կարեն Վերանյան, «Վրաստանի զարգացման նոր ուղին. «չլուծված հիմնախնդիրներ» և այլընտրանքային մոտեցումներ», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 4, 2011
37. Կարեն Վերանյան, «ՀՀ-ն՝ Հարավային Կովկասի ամենամարտունակ երկիրը», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 5, 2011
38. Կարեն Վերանյան, «ՀՀ միջազգային վարկանիշը. «Տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացածության ինդեքսը» և

- «Գործարարության համար լավագույն երկրները 2011թ.», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 6, 2011
39. Արա Մարջանյան, «Վերականգնվող էներգետիկայի ծրագիրը Հայաստանում», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 5, 2011
40. Արա Մարջանյան, «Ադրբեջանական Հանրապետության բնակչության 2009թ. ապրիլյան մարդահամարի արդյունքների մասին», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 6, 2011
41. Արա Մարջանյան, «Ազգային անվտանգությունը գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների դարաշրջանում», «21-րդ ԴԱԸ», N 1, 2011
42. Արա Մարջանյան, «Национальная безопасность в эпоху глобальных геополитических изменений», 21-й ВЕК, N 1, 2011
43. Արա Մարջանյան, «Корпорация RAND и мы. армяно-турецкие взаимоотношения», 21-й ВЕК, N2, 2011
44. Արա Մարջանյան, «Արաբական սցենարի հավանականությունն Ադրբեջանում», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 2, 2011
45. Արա Մարջանյան, «Անկայունությունը Սիրիայում և սիրիահայ համայնքը», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 3, 2011
46. Արա Մարջանյան, «Սիրիական զարգացումների շուրջ», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 4, 2011
47. Արա Մարջանյան, «Սիրիան՝ տևական անկայունության վտանգի առաջ», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 5, 2011
48. Արա Մարջանյան, «Իսլամական գործոնի ակտիվացում հետհեղափոխական արաբական երկրներում», Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, N 6, 2011

Զեկույցներ կոնֆերանսներում (6)

1. Շևակ Տարուխանյան, Энергетическая бзопасность Армении и Восточное партнерство ЕС, конференция «Южный Кавказа и политика Европейского соседства», май 2011, Тбилиси
2. Շևակ Տարուխանյան, Armenia and its role in the Energy Balance of the South Caucasus, OSCE Academy meeting on «Energy and Sustainability”, June 2011, Bishkek
3. Շևակ Տարուխանյան, “Armenia’s energy policy and the new NPP”, Reform Group Conference, August 2011, Salzburg
4. Սերգեյ Տարգսյան, доклад на тему «Сотрудничество Спецслужб в Борьбе с международным терроризмом» (Часть 2) – в рамках работы Группы по борьбе с международным терроризмом – Вена, Австрия, апрель 2011
5. Սերգեյ Տարգսյան, доклад на тему «Сотрудничество Спецслужб в Борьбе с международным терроризмом» (Часть 2) – в рамках работы Группы по борьбе с международным терроризмом – Гармиш, Германия, апрель 2011
6. Սերգեյ Տարգսյան, Перспективы армяно-грузинских отношений в контексте развития военно-политической ситуации в регионе, конференция Центра региональных проблем при РАУ, декабрь 2011

Հրատարակությունների բաշխման ցուցակ

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Յ՝ BEK» ամսագիր (հատ)	«21 st CENTURY» ամսագիր (հատ)	«21-րդ ԴԱՐ» ամսագիր (հատ)	«Գլորուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (հատ)	«Գլորուս Ազգային անվտ.» ամսագիր (հատ)
ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդ						
1.	ՀՀ նախագահ պ-ն Սերժ Սարգսյան	1	1	1	1	1
2.	ՀՀ վարչապետ պ-ն Տիգրան Սարգսյան	1	1	1	1	1
3.	ՀՀ փոխվարչապետ պ-ն Արմեն Գևորգյան	1	1	1	1	1
4.	ՀՀ Ազգային ժողովի նախագահ պ-ն Սամվել Նիկոյան	1	1	1	1	1
5.	ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ պ-ն Գագիկ Հարությունյան	1	1	1	1	1
6.	ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար պ-ն Արթուր Բաղդասարյան	1	1	1	1	1
7.	ՀՀ պաշտպանության նախարար պ-ն Սեյրան Օհանյան	1	1	1	1	1
8.	ՀՀ արտաքին գործերի նախարար պ-ն Էդվարդ Նալբանդյան	1	1	1	1	1
9.	ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար պ-ն Վիգեն Սարգսյան	1	1	1	1	1
10.	ՀՀ գլխավոր դատախազ պ-ն Աղվան Հովսեփյան	1	1	1	1	1

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ճաստ)	«21 st CENTURY» ամսագիրը (ճաստ)	«21-րդ ԴԱՐ» ամսագիրը (ճաստ)	«Փյոթրուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (ճաստ)	«Փյոթրուս Ազգային անվտ.» ամսագիրը (ճաստ)
11.	ՀՀ Ազգային անվտանգության ծառայության պետ պ-ն Գ.Հակոբյան	1	1	1	1	1
12.	ՀՀ Պաշտպանության նախարարության Գլխավոր շտաբի պետ պ-ն Յ.Խաչատուրով	1	1	1	1	1
13.	ՀՀ ոստիկանություն պ-ն Վ.Գասպարյան	1	1	1	1	1
14.	ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդ պ-ն Մ.Մելքոնյան	1	1	1	1	1
15.	ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդ պ-ն Լ.Բաբայանց	1	1	1	1	1
Հոգաբարձուների խորհուրդ						
16.	ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ պ-ն Մ.Թովուզյան	1	1	1	1	1
17.	ՀՀ կառավարություն պ-ն Գ.Գազյան	1	1	1	1	1
18.	Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ արք. Կճոյան	1	1	1		
19.	ՀՀ սփյուռքի նախարար տ-ն Հր. Հակոբյան	7	7	7		
20.	ՀՀ կրթության և գիտության նախարար պ-ն Արմեն Աշոտյան	5	5	5	1	1

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ժառ)	«21 st CENTURY» ամսագիրը (ժառ)	«21-րդ ԴԱԸ» ամսագիրը (ժառ)	«Փյոթուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (ժառ)	«Փյոթուս Ազգային անվտ.» ամսագիր (ժառ)
21.	«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն պ-ն Բ. Վարդանյան	1	1	1		
22.	ՀՀԿ նախագահի տեղակալ պ-ն Մուշեղ Լալայան	1	1	1	1	5
23.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ պ-ն Ա. Մարկոսյան	1	1	1		
ՀՀ կառավարության աշխատակազմ						
24.	ՀՀ կառավարության աշխատակազմի ղակավար պ-ն Դ. Մարգսյան	1	1	1		
25.	ՀՀ կառավարության աշխատակազմ, Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության պետ պ-ն Վ. Ասցատրյան	1	1	1		
26.	ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության պետ պ-ն Ս. Գրիգորյան	1	1	1		
Նախագահի աշխատակազմ						
27.	ՀՀ նախագահի աշխատակազմի	1	1	1	1	1

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ճաստ)	«21 st CENTURY» ամսագիրը (ճաստ)	«21-րդ ԴԱՐ» ամսագիրը (ճաստ)	«Փյոթրուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (ճաստ)	«Փյոթրուս Ազգային անվտ.» ամսագիրը (ճաստ)
	տակազմի ղեկավարի տեղակալ պ-ն Մ.Մինասյան					
28.	ՀՀ նախագահի օգնական պ-ն Լ.Մարտիրոսյան	1	1	1		
29.	ՀՀ նախագահի օգնական պ-ն Ս.Լալայան	1	1	1		
30.	ՀՀ նախագահի մամուլի քարտուղար պ-ն Ա.Արզումանյան	1	1	1	1	1
31.	ՀՀ նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության պետ պ-ն Ա.Սիոյան	1	1	1		
32.	ՀՀ նախագահի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ պ-ն Ա.Ապիտոնյան	1	1	1	1	1
33.	ՀՀ նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ պ-ն Ա.Թունյան	1	1	1		
34.	ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության ղեկավար պ-ն Հ.Հովսեփյան	1	1	1		
35.	ՀՀ նախագահի աշխատակազմին կից Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնի տնօրեն	1	1	1	1	1

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ճաստ)	«21 st CENTURY» ամսագիրը (ճաստ)	«21-րդ ԴԱԸ» ամսագիրը (ճաստ)	«Փլորուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (ճաստ)	«Փլորուս Ազգային անվտ.» ամսագիր (ճաստ)
	պ-ն Ա.Սաղաթեյան					
36.	ՀՀ նախագահի աշխատակազմ, պ-ն Ա.Դավթյան	1	1	1		
<i>Ազգային ժողով</i>						
37.	Ազգային ժողովի փոխնախագահ պ-ն Է.Շարմազանով	1	1	1	1	1
38.	Ազգային ժողով պ-ն Վահան Հովհաննիսյան	1	1	1	1	1
39.	Ազգային ժողով պ-ն Տիգրան Թորոսյան	1	1	1	1	1
40.	Ազգային ժողով, ՀՀԿ խմբակցության նախագահ պ-ն Գալուստ Մահակյան	1	1	1	1	1
41.	Ազգային ժողով, ՀՅԴ խմբակցության անդամ պ-ն Արմեն Ռուստամյան	1	1	1		
42.	Ազգային ժողով, ՀՀԿ խմբակցության անդամ պ-ն Արտակ Դավթյան	1	1	1	1	1
43.	Ազգային ժողով, ՀՀԿ խմբակցության անդամ պ-ն Դավիթ Հարությունյան	1	1	1		
44.	Ազգային ժողով, ԲՀԿ խմբակցության անդամ պ-ն Արամ Սաֆարյան	1	1	1	1	1
45.	Ազգային ժողով, «Ժա-	1	1	1	1	1

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ժառ)	«21 st CENTURY» ամսագիրը (ժառ)	«21-րդ ԴԱԸ» ամսագիրը (ժառ)	«Փյոթրուս Էներգետիկ անվտ» ամսագիր (ժառ)	«Փյոթրուս Ազգային անվտ.» ամսագիր (ժառ)
	ռանգություն» կուսակցության անդամ պ-ն Ստեփան Սաֆարյան					
46.	Ազգային ժողով, Անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովի նախագահ պ-ն Արթուր Աղաբեկյան	1	1	1	1	1
47.	Ազգային ժողով, գրադարան	1	1	1		
ՀՀ Վերահսկիչ պալատ						
48.	ՀՀ Վերահսկիչ պալատի նախագահ պ-ն Ի.Զաքարյան	1	1	1	1	1
Կուսակցություններ						
49.	Հայաստանի Հանրապետական կուսակցություն	15	15	15		
50.	Հայ հեղափոխական դաշնակցություն	1	1	1		
51.	Դեմոկրատական կուսակցության գրասենյակ, պ-ն Արամ Գ. Սարգսյան	1	1	1		
Արտաքին գործերի նախարարություն						
52.	ՀՀ ԱԳ փոխնախարար պ-ն Շավարշ Քոչարյան	1	1	1	1	1
53.	ՀՀ ԱԳՆ պ-ն Ա.Հովակիմյան	1	1	1	1	1
Պաշտպանության նախարարության Գլխավոր շտաբ						
54.	ՀՀ Պաշտպանության նախարարության Գլխավոր շտաբի հետախուզական	1	1	1	1	1

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ճաստ)	«21 st CENTURY» ամսագիրը (ճաստ)	«21-րդ ԴԱՐ» ամսագիրը (ճաստ)	«Փյոթրուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (ճաստ)	«Փյոթրուս Ազգային անվտ.» ամսագիրը (ճաստ)
	Վարչության պետ պ-ն Արշակ Կարապետյան					
55.	Դրաստամատ Կանայանի անվան ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնի տնօրեն պ-ն Հայկ Քոթանջյան	1	1	1	1	1
ՀՀ Կենտրոնական բանկ						
56.	ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ պ-ն Ա.Ջավադյան	1	1	1	1	1
Երևանի քաղաքապետարան						
57.	Քաղաքապետ պ-ն Տարոն Մարգարյան	1	1	1	1	1
58.	Քաղաքապետի տեղակալ պ-ն Վահագն Առաքելյան	1	1	1	1	1
59.	Քաղաքապետի խորհրդական պ-ն Գ.Սարիբեկյան	1	1	1	1	1
ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտե						
60.	ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ պ-ն Ս.Հարությունյան	1	1	1	1	1
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն						
61.	Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի գործադիր տնօրեն պ-ն Թ.Ղողոսյան	1	1	1		
Հայ-ռուսական լեռնահանքային ընկերություն						

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ժառ)	«21 st CENTURY» ամսագիրը (ժառ)	«21-րդ ԴԱՐ» ամսագիրը (ժառ)	«Փլորուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (ժառ)	«Փլորուս Ազգային անվտ.» ամսագիր (ժառ)
62.	Հայ-ռուսական լեռնահանքային ընկերություն պ-ն Մ. Կիրակոսյան	1		1		
Դեսպանություններ						
63.	ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն պ-ն Ն. Հայրապետյան	1	1	1		
64.	ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատուն	1	1	1		
65.	ՀՀ-ում ՌԴ դեսպանատուն	1	1		1	1
66.	ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանատուն	1	1	1		
67.	ՀՀ-ում Իրանի դեսպանատուն			1		
ՀՀ ԳԱԱ						
68.	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ պ-ն Ա. Մելքոնյան	1	1	1		
69.	ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ պ-ն Գ. Պողոսյան	1	1	1		
70.	ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ տ-ն Հասմիկ Հմայակյան	1	1	1		
71.	ՀՀ ԳԱԱ ֆունդամենտալ գրադարան	1	1	1		
72.	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարան	1	1	1		

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ժառ)	«21 st CENTURY» ամսագիրը (ժառ)	«21-րդ ԴԱԸ» ամսագիրը (ժառ)	«Փորուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (ժառ)	«Փորուս Ազգային անվտ.» ամսագիր (ժառ)
73.	Ազգային գրադարան	2	2	2	2	2
74.	Ազգային գրապալատ	2	2	2	2	2
75.	ՀՀ պետական ռեգիստր	2	2	2	2	2
Համալսարաններ						
76.	Երևանի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆ. Արամ Սիմոնյան	1	1	1		
77.	ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության ամբիոնի վարիչ պ-ն Լևոն Սարգսյան			1	1	1
78.	Սլավոնական համալսարանի ռեկտոր պ-ն Ա.Դարբինյան	1	1	1		
79.	Կառավարման ակադեմիա	1	1	1	1	1
ՋԼՄ						
80.	«Голос Армении», գլխավոր խմբագիր տ-ն Ֆլորա Նախչարյան	1	1	1		
ԼՂՀ						
81.	ԼՂՀ նախագահ պ-ն Բակո Սահակյան	1	1	1	1	1
82.	ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվական վարչության պետ պ-ն Դավիթ Բաբայան	1	1	1	1	1
83.	ԼՂՀ վարչապետ պ-ն Ա.Հարությունյան	1	1	1	1	1
84.	ԼՂՀ պաշտպանության	1	1	1		

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ժառ)	«21 st CENTURY» ամսագիրը (ժառ)	«21-րդ ԴԱԸ» ամսագիրը (ժառ)	«Փյոթրուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (ժառ)	«Փյոթրուս Ազգային անվտ.» ամսագիր (ժառ)
	նախարար պ-ն Մ.Հակոբյան					
85.	ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ պ-ն Աշոտ Ղուլյան	1	1	1	1	1
86.	ԼՂՀ Ազգային ժողով, գրադարան	2	2	2		
87.	ԼՂՀ Ազգային ժողովի անդամ Սերգեյ Ղազարյան	1	1	1	1	1
88.	ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն	1	1	1		
89.	ԼՂՀ պետական համալսարան, պ-ն Համլետ Գրիգորյան	2	2	2		
90.	ԼՂՀ ԱԳ նախարար պ-ն Գեորգի Պետրոսյան	2	2	2	1	1
91.	Արցախի թեմի առաջնորդ Պարզև սրբազան	1	1	1		
92.	ԼՂՀ Կաճառ գիտական կենտրոն հ/կ	1	1	1	1	1
93.	«Նորավանք» ԳԿՀ-ի աշխատակիցներ	51	51	51	7	18
«ՀայՌուսագարդ» ՓԲԸ						
94.	«ՀայՌուսագարդ» ՓԲԸ գլխավոր տնօրեն պ-ն Վ.Հարությունյան				1	1
95.	«ՀայՌուսագարդ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ պ-ն Ա.Հովսեփյան				1	1
96.	«ՀայՌուսագարդ» ՓԲԸ գլխավոր տնօրենի				1	1

Հ/հ	Ամսագիրը ստացող կազմակերպության անվանումը, ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը	«21-Ֆ BEK» ամսագիրը (ժառ)	«21 st CENTURY» ամսագիրը (ժառ)	«21-րդ ԴԱԸ» ամսագիրը (ժառ)	«Փոքրուս Էներգետիկ անվտ.» ամսագիր (ժառ)	«Փոքրուս Ազգային անվտ.» ամսագիր (ժառ)
	տեղակալ պ-ն Ռ.Սուրենյան					
Բաժանորդագրություն						
97.	«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ	4	4	48	30	10
98.	Կենտրոնական բանկ	2	2	2	5	5
99.	Հայմամուլ	1	1	3	2	2
Արտերկիր						
100.	Գյուլբենկյան հիմնադրամ պ-ն Զ. Եկավյան	3	3	3	3	3
101.	ՌԴ, ք.Մոսկվա պ-ն Ս.Գրիգյան	1	1			
102.	ՌԴ, ք.Մոսկվա պ-ն Ա. Գասպարիշվիլի	1	1			
103.	Ուկրաինա, ք.Խարկով պ-ն Վ.Ն. Նիկոլանսկի	1				
	Ընդամենը	190	188	240	110	105



0026, 0 րո՞՞՞ Կ, ր 3 ր ր»- ՇԿ ԱՅ՝ 23/1
Ն՞՞՞: (+37410) 44-04-72, Ն՞՞՞/ն՞՞՞ ùè (+37410) 44-04-73
E-mail office@noravank.am
website : www.noravank.am

28.02.2011թ.
N 12

«Նորավանք» ԳԿՀ
Հոգաբարձուների խորհրդի նախագահ,
ՀՀ վարչապետ
պարոն Տիգրան Մարգարյանին

Հարգելի պարոն Վարչապետ,

Համաձայն «Նորավանք» ԳԿՀ Հոգաբարձուների խորհրդի 2011թ. փետրվարի 1-ի նիստում ընդունված որոշման (Արձանագրություն N14.1/[60474]-11, կետ 4.2) կից Ձեզ ենք ներկայացնում Համահայկական համալսարանի ստեղծման նորացված ծրագիրը: Ծրագրի առաջին նախագիծը քննարկվել է 2009-ի ապրիլի 17-ին՝ ՀՀ Կրթության և գիտության նախարար Ս.Սեյրանյանի, փոխնախարար Մ.Մկրտչյանի, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ղեկավար Ս.Հարությունյանի և ՀԱՄՀ գործադիր տնօրեն Բ.Փափազյանի մասնակցությամբ:

Ծրագրի նորացված նախագիծը քննարկվել է փետրվարի 22-ին, «Նորավանք» ԳԿՀ Փորձագիտական խորհրդի նիստում: Դրանում ներկայացված են Համահայկական համալսարանի գործունեության նպատակներին, համալսարանի ստեղծման համար անհրաժեշտ քայլերին, կրթական մոդուլներին և ուղղություններին առնչվող մեր պատկերացումները: Ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով առաջին քննարկման ժամանակ հնչած դիտարկումներն ու միջազգային փորձը:

Անհրաժեշտության դեպքում «Նորավանք» ԳԿՀ-ն կանցկացնի ծրագրի նախագծի քննարկում Ձեր մասնակցությամբ, ինչը հիմք կհանդիսանա կարծիքների փոխանակման և Ձեր դիտարկումների հիման վրա ծրագրի վերամշակման համար:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն

Գ. Հարությունյան



0026, Երևան, Գարեգին Նժդեհի, 23/1
հեռ: (+37410) 44-04-72, հեռ/Ֆաքս (+37410) 44-04-73
E-mail office@noravank.am
website : www.noravank.am

27.09.2011թ.
N 65

ՀՀ Վարչապետ
պարոն Տիգրան Սարգսյանին

Մեծարգո Վարչապետ

Համաձայն Համայնական համալսարանի գործունեության ֆինանսավորման համար ոչ պետական ներդրումներ ներգրավելու վերաբերյալ Ձեր հանձնարարականի (հ/հ 02/14.1/10255-11; 21.06.2011թ)՝ տեղեկացնում եմ.

1. Հիմնադրամը Համահայկական համալսարանի վերաբերյալ հրատարակել է երեք լեզուներով բուկլետ (կցված է նամակին) և էլեկտրոնային եղանակով առաքել է ավելի քան 1100 հասցեով:
2. Հայրենիք-Սփյուռք համաժողովի շրջանակներում թիրախային նախնական բանակցություններ են վարվել Սփյուռքի որոշ ներկայացուցիչների հետ:
3. Սկսել ենք Ամադուի՝ Հիմնադրամին պատկանող հողամասի մի մասը (ընդհանուր 26 հեկտարից 15 հեկտարը) գյուղատնտեսական կարիքների համար օգտագործելու թույլտվություն ստանալու ուղղությամբ գործընթացը, քանի որ նախնական բանակցություններում գործարարները հատուկ հետաքրքրություն են ցուցաբերում հողամասի օգտագործման հնարավորությունների նկատմամբ:

Աշխատանքները Համահայկական համալսարանի ուղղությամբ շարունակվում են: Մասնավորապես, հնարավորության պարագայում, խիստ օգտակար կլինեն 2012թ. այցելել ժնն՝ տեղի հայ գործարարների և ազգային կառույցների ու Բեռլին՝ համալսարանական շրջանակներում գործող հիմնադրամների ներկայացուցիչների հետ հանդիպման նպատակով: Այս և ընդհանուր առմամբ՝ Համահայկական համալսարանի խնդրում ակնկալում ենք Ձեր աջակցությունը և անմիջական մասնակցությունը:

Տեղեկացնում եմ նաև, որ ս.թ. դեկտեմբերի 9-10-ը Երևանում Հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպվում է Միջազգային գիտաժողով «Հայության կրոնադավանական խնդիրները. մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով: Ակնկալում եմ Ձեր ուշադրությունն այդ միջոցառման նկատմամբ:

Տնօրեն

Գագիկ Հարությունյան

Համահայկական համալսարանի ստեղծման ծրագրային դրույթներ

Համահայկական համալսարանի նպատակները

Հայաստանի և Հայության ինտելեկտուալ ռեսուրսների վերականգնում և կազմակերպում, դրանց ուղղորդում ազգային շահերի սպասարկմանը:

1. ՀՀ տարածքում միջազգային չափանիշներին համապատասխան բարձրագույն կրթական հաստատության ստեղծում:
2. Առաջին փուլում տարածաշրջանային մրցունակ բուհի ստեղծում:

Համահայկական համալսարանի գործունեությունը պետք է ուղղվի կարևորագույն գործառույթի՝ մրցունակ ազգային կադրային ռեզերվի պատրաստմանը և ժամանակակից կրթության ապահովմանը:

Համահայկական համալսարանի ստեղծման համար առկա միջավայրը

ՀՀ և Մփյուռք

ՀՀ տարածքում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունները հիմնականում չեն համապատասխանում կրթական և գիտական ոլորտների միջազգային մրցունակության չափանիշներին: Հայաստանյան ոչ մի բուհ ընդգրկված չէ *Academic Ranking of World Universities*¹ 500 լավագույն համալսարանների և *Times* ամսագրի *QS World University Rankings 2010*² 300 լավագույն համալսարանների ցանկերում: Մինևս ժամանակ, Մփյուռքում չկան մրցունակ կադրեր պատրաստող հայկական բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնց առկայության դեպքում հնարավոր կլիներ ապահովել «ՀՀ-միջազգային կրթական չափորոշիչներ» համակարգային կապը: Արդյունքում՝ ՀՀ բուհերը մեծ մասամբ ոչ մրցունակ կադրեր են տալիս, իսկ բարձրորակ մասնագիտական կադրերի պատրաստումը հնարավոր է դառնում միայն արտասահմանյան բուհեր ՀՀ քաղաքացիների գործուղումների շնորհիվ (անհատական, պետական և միջազգային ծրագրերի միջոցով): Մինևս ժամանակ, Մփյուռքի հայության այն հատվածը, որը բարձրորակ կրթություն է ստանում հեղինակավոր միջազգային բուհերում, բարոյահոգեբանական և սոցիալական ցանցերի միջոցով ինչ-որ չափով կապված է ՀՀ-ի հետ, բայց չի մասնակցում վերջինիս զարգացմանը:

Տարածաշրջան

Բարձրորակ և մրցունակ կրթական ծրագրերի իրականացման տեսանկյունից մեծ խնդիրներ ունեն նաև տարածաշրջանային զարգացած և զարգացող պետությունները: Ի տարբերություն Մինգապուրի և Չինաստանի, որոնց զարգացումը պայմանավորվել է գերմրցունակ Մինգապուրի և Շանհայի համալսարանների ստեղծմամբ, Մերձավոր Արևելքում Դուբայի և Դոհայի ֆինանսական և առևտրային գլոբալ կենտրոնների ստեղծումը չի հանգեցրել դրանցում բարձրակարգ բարձրագույն կրթական լուրջ կենտրոնների ստեղծմանը: Նույնպիսի խնդիրների առջև է կանգնած նաև նախկին հետխորհրդային տարածքը, որտեղ սոցիալ-տնտեսական զարգացումը գրեթե չի

¹ http://www.arwu.org/ARWU2010_2.jsp

² <http://www.topuniversities.com/university-rankings/world-university-rankings/2010/subject-rankings/natural-sciences>

ուղղորդվում կրթական և մասնագիտական մակարդակի բարձրացմամբ: Արդյունքում՝ տարածաշրջանային ֆինանսատնտեսական կենտրոնները կրթական համակարգում ունեն գրեթե նույն խնդիրները, ինչ և ՀՀ-ն. մրցունակ կադրերի պատրաստումը հնարավոր է միայն այլ երկրների բուհերում:

Ըստ մեզ, տարածաշրջանային զարգացմանը մրցունակ կադրերով սպասարկող կրթական կենտրոն ունեցող տարածաշրջանային պետությունն էլ կարող է դառնալ տարածաշրջանային կրթական առաջատարը: Հայաստանն այս առումով բավական նպաստավոր դիրքում է գտնվում՝ հանդիսանալով երեք տարածաշրջանների՝ Սևծովյան շրջանի, Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի սահմանակից պետություն:

Համահայկական համալսարանի գործունեության մեթոդները

Ելնելով վերը նշված իրողություններից՝ մրցունակ Համահայկական համալսարանի ստեղծումը պետք է հիմնված լինի 3 հիմնական սկզբունքի վրա.

- ՀՀ քաղաքացիներին մրցունակ կրթության տրամադրում (սկզբնական շրջանում՝ հեռավար-ստացիոնար մոդուլի միջոցով):
- Արտասահմանյան բուհերում ուսանող հայերի «ամրակցում» Հայաստանին (սկզբնական շրջանում՝ հեռավար մոդուլի միջոցով):
- Տարածաշրջանային զարգացմանը սպասարկող կադրերի պատրաստման ծրագրերի իրականացում (հատուկ կրթական ծրագրերի և վերապատրաստման մոդուլի միջոցով):

Ըստ վերը նշված սկզբունքների էլ պետք է իրականացվի Համահայկական համալսարանի գործունեությունը, որը, սկզբնական շրջանում, բաժանված կլինի 3 հիմնական մոդուլների՝ «հեռավար-ստացիոնար», «հեռավար» և «հատուկ տարածաշրջանային կրթություն»:

Հեռավար-ստացիոնար մոդուլ

Համալսարանն իր գործունեության այս մասում պետք է ինտեգրի հեռավար և ստացիոնար կրթության մոդուլները, ինչի արդյունքում պետք է ստեղծվի մի կրթական համակարգ, որի գործունեության հիմնաքարն **ուրույն ուսումնական ծրագրերի առկայությունն է՝ կազմված հետևյալ մեթոդաբանությամբ.**

- **Դիագնոստիկա.** Իրականացվելու է հետազոտություն ՀՀ պետական և մասնավոր ոլորտների համար անհրաժեշտ կադրային ռեզերվի բնույթի որոնման ուղղությամբ, որոշվում են այն հումանիտար ոլորտները, որոնց ուղղությամբ գործող առկա բուհերը չեն կարողանում ապահովել մրցունակ կադրեր:
- **Մոդուլների մրցույթի փուլ.** Հաշվի առնելով «Դիագնոստիկայի» փուլում ձեռք բերված արդյունքները՝ սկսվում է ուսումնական մոդուլների, դասընթացի տևողության և ծավալների քննարկումը: Մոդուլների առաջարկման ու քննարկման գործընթացին ընդգրկվում են տեղի և արտասահմանյան (հիմնական հատվածը՝ սփյուռքի մասնագետներ) առաջատար գիտնականներ, պետական և մասնավոր ոլորտների մասնագետներ: Արդյունքում՝ ընտրվում է ուսումնական ծրագրի ամենահարմար և մրցունակ մոդուլը:
- **Ծրագրի վերջնական մշակում.** Այս փուլում պետք է տեղի ունենա ընտրված ուսումնական ծրագրի վերջնական մշակումը, որն իրականացվում է զուտ գիտական և ուսումնական ոլորտի մասնագետների կողմից: Այս փուլում պետությանն ու մասնավոր հատվածին անհրաժեշտ կադրերի պատրաստման ծրագիրը վերափոխվում է **դիսցիպլինարից միջդիսցիպլինարի:** Այսինքն՝ որոշվում է, թե շուկային կամ պետական համակարգին անհրաժեշտ գիտելիքներից բացի,

բուհի շրջանավարտներն **ինչ այլ գիտելիքներ** պետք է ունենան, որպեսզի **ապահովեն Հայաստանի և Հայության համագգային մրցունակությունը** ռազմավարական հեռանկարի տեսանկյունից:

- **Ծրագրի իրականացում:**
- **Ծրագրի արդյունքների գնահատում:**

Համահայկական համալսարանում հեռավար-ստացիոնար կրթությունն ստանալու համար կարող են ընդունվել համալսարանների բարձր կուրսերի կամ մագիստրատուրայի ուսանողներ: Ուսման տևողությունը՝ 1-2 տարի: Ուսումնական գործունեությունը պետք է կազմակերպվի հիմնականում հեռակա-դիստանցիոն բնույթով, Հայաստանում պետք է կազմվեն ուսման համար անհրաժեշտ բոլոր հետազոտությունները: Ենթադրաբար ամիսը մեկ անգամ տեղի կունենան *on-line* սեմինարներ, որոնց ընթացքում հայաստանցի կամ արտասահմանցի մասնագետները «կենդանի դասախոսություններ» կկարդան, կպատասխանեն ուսանողների բոլոր հարցերին: Հայաստանաբնակ ուսանողների համար *on-line* սեմինարների կազմակերպումը պետք է տեղի ունենա հենց Համահայկական համալսարանում, արտասահմանում բնակվող ուսանողների համար պետք է ապահովվեն համապատասխան տեխնիկական հաճախականություններ սեմինարների «կենդանի մասնակցության» ապահովման համար:

Մինևույն ժամանակ, տարեկան երկու անգամ Համահայկական համալսարանի բոլոր ուսանողները 3-4 շաբաթով (ուսանողական արձակուրդների ժամանակ) կհավաքվեն Հայաստանում: Այս ընթացքում ստուգվելու են ուսանողների կատարած աշխատանքները, 2 շաբաթ ուսանողները լսելու են «կենդանի դասախոսություններ», որոնք կարդալու են ուսումնական ծրագրի իրականացման աշխատանքների մասնակից հայաստանցի և արտասահմանցի մասնագետները, կկազմակերպվի ուսանողների և մասնագետների ազատ շփում:

Հեռավար կրթության մոդուլ

Հեռավար կրթության ծրագրի իրականացումը հիմնականում ուղղված կլինի Մփյուռքի հայ երիտասարդության հումանիտար և Հայաստանին ու Հայությանն առնչվող կրթության ապահովմանը: Համալսարանի հիմնական նպատակն է հայկական, հիմնականում՝ հումանիտար բարձրագույն կրթության ապահովումը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Համահայկական համալսարանի հեռավար կրթության ծրագրի յուրահատկություններից պետք է լինի այն, որ այստեղ կարող են ընդունվել և սովորել բոլորը, ընդունելության համար անհրաժեշտ չպետք է լինի բարձրագույն կրթության առկայությունը:

Համահայկական համալսարանի հեռավար կրթական ծրագրի շրջանակներում կրթությունն ստանալու համար համալսարանն ընդունվելուց հետո ուսանողին պետք է տրամադրվի անհատական մասնագետ-դասախոս, որի հետ առաջին փուլում հստակեցվում է ուսանողի հետաքրքրությունների շրջանակը: Դրանից հետո դասախոսի մասնակցությամբ համալսարանում կազմվելու է ուսումնական դասընթացի անհատական ծրագիրը, որոշվելու է դասընթացի ժամկետը: Ծրագրի ուսուցումն իրականացվելու է ոչ միայն ուսանողի անհատական դասախոսի (ղեկավարի), այլ նաև համալսարանում աշխատող այլ մասնագետների կողմից: Դրանից հետո ուսանողին տրվելու է համապատասխան գրականություն: Ուսումնական ծրագրի հիմնական մասն այդ գրականության ընթերցումն է և դրա վերաբերյալ առաջացած հարցերի քննարկումը դասախոսի/դասախոսների հետ: Դասընթացի ավարտին ուսանողները կհանձնեն ստուգաթք: Որպես կանոն, մեկ ուսումնական ծրագիր ընտրած ուսանողները հետագայում կարող

են ընտրել մի քանի այլ ծրագրեր: Համենայնդեպս, համալսարանը ձգտելու է ուսանողների հետ աշխատանքը կազմակերպել այնպես, որպեսզի նրանք մնան համալսարանում և ստանան ազգային հարցերին առնչվող ընդհանուր կրթություն: Ինչպես ցույց է տալիս Իսրայելի բաց համալսարանի փորձը, որպես կանոն, ասենք, «պատմություն» բաժնի որևէ ծրագիր ընտրած ուսանողը հետագայում ընտրում է նաև ծրագրեր «գրականություն» կամ «սոցիոլոգիա» բաժիններից՝ հումանիտար ուսուցումը հասցնելով ավարտական և լիարժեք փուլի:

Օգտակար կարող է լինել արտասահմանյան բուհերում Համահայկական համալսարանի ծրագրերի դասավանդումը՝ միջհամալսարանական ցանցի ձևավորման միջոցով: Ինչ է ներկայացնում այս մոտեցումը.

Փուլ 1. Ստեղծվում և հրատարակվում է ուսումնական ծրագրերի դասավանդման համար անհրաժեշտ բարձրորակ գրականություն:

Փուլ 2. Առաջատար արտասահմանյան բուհերի հետ համագործակցության վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվում: Ստորագրվում է պայմանագիր, որի համաձայն՝ արտասահմանյան բուհն իրավունք է ստանում իրականացնել Համահայկական համալսարանի ուսումնական ծրագրերի դասավանդում:

Փուլ 3. Արտասահմանյան բուհին է տրամադրվում ուսումնական ծրագրի դասավանդման համար անհրաժեշտ ողջ գրականությունը: Արտասահմանյան մասնագետները ծանոթանում են դասավանդման մեթոդաբանությանը:

Փուլ 4. Արտասահմանյան բուհն ինքն է հայտարարում ընդունելություն Համահայկական ուսումնական ծրագրի դասավանդման համար, ինքն էլ իրականացնում է կրթական ծրագիրը:

Համալսարանի ստեղծման համար անհրաժեշտ առաջին կարևոր քայլերը, ըստ մեզ, հետևյալն են.

1. Մահմանել և մշակել այն ուղղությունները, որոնցով իրականացվելու է կրթական գործընթացը: Այս քայլը ձեռնարկելու համար անհրաժեշտ է պետական, կորպորատիվ և համայնքային կառույցների կադրային ակնկալիքների ճշգրտում: Պետք է իրականացվի համատեղ, ՀՀ կառավարության, Կրթության և գիտության նախարարության, Մփյուռքի նախարարության և խոշոր ընկերությունների հետ համագործակցության արդյունքում:
2. Ստեղծել թեմաների հնարավոր դասավանդողների ցանկ՝ հաշվի առնելով համալսարանի նախագծի պիլոտային բնույթը և ՀՀ-ում ու Մփյուռքում առկա ներուժը: Անհրաժեշտ է որոշել, թե որքանով է ՀՀ և Հայության ինտելեկտուալ կարողությունն ունակ բավարարել կադրային պահանջարկը և այնուհետև մշակել օտար մասնագետների հետ համագործակցության ուղղությունները:
3. Որոշել այն թիրախային խումբը, որը կարող է դառնալ համալսարանի ուսանող՝ առաջին ընդունելությունը սահմանափակելով 20 ուսանողով: Անհրաժեշտ ենք համարում ընդունելությունը կատարել ոչ թե դասական թեստային եղանակով, այլ հարցազրույցներով, որոնց համար կարևորագույն չափանիշներ պետք է լինեն դիմորդի «կրեատիվությունը» և ընդհանուր պատրաստվածությունը:
4. Մշակել «Համալսարան-Պետություն», «Համալսարան-Ընկերություն» և «Համալսարան-Համայնք» կապի՝ պատրաստված կադրերը պետական և մասնավոր կառույցներ ուղղելու մեխանիզմներ:

Տարածաշրջանային կրթություն

Տարածաշրջանային ֆինանսատնտեսական զարգացմանը սպասարկող կրթական ծրագրերի իրականացման բավական լուրջ փորձեր են կատարվել Եվրոպայում և ԱՊՀ տարածքում: Դրանցից կարելի է նշել հետևյալները.

- **Կառավարման և տեխնոլոգիաների եվրոպական դպրոցը Բեռլինում (<http://www.esmt.org>)** – ստեղծվել է 2004 թվականին խոշոր գերմանական կորպորացիաների կողմից, որոնց թվում՝ [Allianz SE](#), [Axel Springer AG](#), [Bayer AG](#), [Federation of German Industries](#) (Bundesverband der Deutschen Industrie, BDI), [Daimler AG](#), [Deutsche Bank AG](#), [Deutsche Lufthansa AG](#), [Deutsche Telekom AG](#), [E.ON AG](#), [GAZPROM Germania GmbH](#), [McKinsey & Company, Inc.](#), [Robert Bosch GmbH](#), [RWE AG](#), [Siemens AG](#) և այլ կազմակերպություններ: Դպրոցի ստեղծման հիմնական նպատակն է եղել տարածաշրջանային զարգացող շուկաների համար կադրերի պատրաստումը: Դպրոցում իրականացվում են միայն մագիստրական ծրագրեր, իսկ հիմնական ուսանողները 18 երկրների ուսանողներն են, որոնք նպատակ ունեն աշխատել խոշոր եվրոպական կառույցներում: Դպրոցը սուբսիդավորվում է խոշոր գերմանական ընկերությունների կողմից, որոնք ստանում են շրջանավարտների հետ privileged contract ստորագրելու հնարավորություն: Նշենք, որ դասավանդման գործընթացն ընթանում է նաև «ստատուսային սուբսիդավորման» հիման վրա. դպրոցի հիմնադիր ընկերությունների ղեկավարներն առանց շահ հետապնդելու դասավանդում են այստեղ, ինչը ստատուսային առավելություն է տալիս դպրոցին: Այստեղ դասավանդում են նաև Գերմանիայի ֆինանսների նախարարը, հատուկ դասախոսություններով հանդես է գալիս նաև երկրի կանցլերը:
- **Ռուսաստանի ԱԳՆ ՄՀՄՊԻ Էներգետիկ քաղաքականության ինստիտուտ (*Институт энергетической политики МГИМО (У) МИД России*)** – ստեղծվել է 2003-ին ռուսական և խոշոր եվրոպական էներգետիկ ընկերությունների կողմից՝ ռուսական և եվրոպական էներգետիկ շուկաների համար բարձրորակ մասնագետների պատրաստման նպատակով: Ինստիտուտում դասավանդում են էներգետիկ ընկերությունների ղեկավարներ և բարձրորակ մասնագետներ:
- ***New Economic School of Georgia* (<http://www.nesg.net>)** – ստեղծվել է 2004-ին մագիստրական և դոկտորական ծրագրերի իրականացման համար: Համագործակցում է համաշխարհային հեղինակություն ունեցող եվրոպական և ամերիկյան պրոֆեսորների հետ, որոնք և ղեկավարում են մագիստրական և դոկտորական թեզերը: Մա հրապարտում է ոչ միայն Վրաստանի քաղաքացիներին, այլ նաև օտարերկրացիներին: Դպրոցում ուսանում են Ադրբեջանի, Ռուսաստանի, Թուրքիայի, ԱՄԷ-ի, Բուլղարիայի, Ուկրաինայի, Սաուդյան Արաբիայի քաղաքացիներ, որոնք գտնում են, որ դպրոցում ստանում են բավարար գիտելիքներ տարածաշրջանային ֆինանսական և տնտեսական զարգացումները լավ հասկանալու և իրենց տեղը գտնելու համար:

Նշենք, որ վերջին հաստատությունը սկսել է զբաղվել նաև Educational Franchising-ով, որը ենթադրում է լավագույն բուհերի կրթական ծրագրերը «բերել» Վրաստան. 2012-ից դպրոցին կից գործելու է Հարվարդի համալսարանի տնտեսագիտության ծրագիրը, որը դասավանդելու են Հարվարդից հրավիրված դասախոսներ՝ հիմք ընդունելով համալսարանի ծրագիրն ու դասավանդման մեթոդաբանությունը:

Պետք է ընդգծել, որ նման մեթոդաբանությունը բավական հեռանկարային է, քանի որ վրացական դպրոցի համար կարող է վճարունակ ուսանողների հոսք ապահովել արաբական զարգացած և զարգացող երկրներից, որոնք Վրաստանում կարող են ստանալ միջազգային չափորոշիչներին համապատասխան կրթություն:

Գտնում ենք, որ նման ծրագրերի հիման վրա հեռանկարային է Համահայկական համալսարանի համար հատուկ կրթական ծրագրի մշակումը, ինչը հրապուրիչ կլինի թե՛ ՀՀ քաղաքացիների, թե՛ Սփյուռքի և թե՛ տարածաշրջանային պետությունների համար:

Նշենք, որ ի տարբերություն գրոյից ստեղծված վրացական դպրոցի, Համահայկական համալսարանի ծրագիրը լավ ձևավորման համար հսկայական ռացիոնալ ներուժ ունի, այդ թվում.

- տարածաշրջանում հայկական համայնքների առկայությունը,
- հայկական համայնքների՝ տարածաշրջանային երկրների հետ կոմունիկատորի դերի ստանձնման հնարավորությունը,
- հայկական ինտելեկտուալ ներուժի առկայությունը համաշխարհային խոշոր կազմակերպություններում և բուհերում, ինչը կարող է դյուրացնել բարձրորակ դասավանդման հնարավորությունը Համահայկական համալսարանում:

Վերը նշված մոդուլների և ծրագրերի մշակման, կրթական ծրագրերի կազմման, բանակցությունների վարման, բյուջետային պլանավորման համար, կարծում ենք, պետք է ստեղծել հատուկ խումբ՝ ՀՀ պետական և բիզնես-կառույցների, «Նորավանք» հիմնադրամի մասնակցությամբ, որը պետք է վարի կազմակերպչական բոլոր աշխատանքները Համահայկական համալսարանի ռազմավարության, ծրագրերի ու կառուցվածքի վերջնական մշակման ուղղությամբ:

**Ամառուի տարածքի հետ կապված
հնարավոր նախագծերը և խնդիրները**

2010թ. ՀՀ կառավարության որոշմամբ Ամառու գյուղի տարածքը (24,39 հա) իր շինություններով հաձնվել է «Նորավանք» ԳԿՀ-ին՝ անհատույց օգտագործման:

Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 07.02.2011թ. «Նորավանք» ԳԿՀ-ին ուղղված N02/14/319-11 գրությամբ ներկայացված տեղեկանքի, շինությունների և հողամասի հիմնանորոգման աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 181 151,76 հազ. դրամ, որից նախորդ տարիներին իրականացվել են 106 154, 0 հազ. դրամի աշխատանքներ, այդ թվում.

2007թ.՝ 50 000,0 հազ. դրամ

2008թ.՝ 25 000,0 հազ. դրամ

2009թ.՝ 10 809,7 հազ. դրամ

2010թ.՝ 20 344,3 հազ. դրամ:

Իսկ 2011թ. նախատեսված է իրականացնել 75 000, 0 հազ. դրամի աշխատանք:

